ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ — ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

## ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

I ՄԱՍ

ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1939

Թույլատրված է օգտվելու մինչև ծրագրի հաստատումը, Բարձրագույն դպրոցի գործերի կոմիտեի կողմից.

ԽՍՀՄ-ԺԿԽ Բարձրագույն դպրոցի գործերի համամիութենական կոմիտե.

15 MAR 2018

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Ա. Արևմտյան Եվրոպայի, Ամերիկայի և Արևելքի յերկրների տնտեսական պատմության հատկացված ժամերի չափը.

**Հին աշխարհ**

Հատված 1-ին .............. 6 ժամ.
Հատված 2-րդ .......... 8 ժամ.

**Միջին դարեր**

Հատված 1-ին .......... 8 ժամ.
Հատված 2-րդ ........ 10 ժամ.
Հատված 3-րդ ........ 12 ժամ.

**Նոր դար**

Հատված 1-ին ........ 14 ժամ.
Հատված 2-րդ ........ 14 ժամ.
Հատված 3-րդ ........ 8 ժամ.

Ընդամենը ... 80 ժամ.

# Բ. ԾՐԱԳԻՐ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական պատմության առարկան և տեղը սոցիալ-տնտեսական այլ դիսցիպլինների շարքում, նրա տարբերությունն ընդհանուր պատմությունից:

Տնտեսական պատմությունն և քաղաքատնտեսությունը: Տնտեսական պատմությունը մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններում:

Գիտության կուսակցականությունը և տնտեսական պատմության գծով յերկու ճակատում պայքարելու խնդիրը:

Ընկ. ՍՏԱԼԻՆԻ նամակը «Պրոլետարսկայա ռեվոլյուցիա»-յի խմբագրության:

Ընկերներ՝ ՍՏԱԼԻՆԻ, ԿԻՐՈՎԻ և ԺԴԱՆՈՎԻ դիտողությունները նոր պատմության և ՍՍՀՄ-ի պատմության դասագրքերի կոնսպեկտների առթիվ: Ժյուրիի վորոշումը կոնկուրսի ներկայացված պատմության դասագրքերի առթիվ:

Բուրժուական տեսությունների, պատմության ֆաշիստական ֆալսիֆիկացիայի, ֆաշիզմի տրոցկիստական-բուխարինյան գործակալների, «տեսությունների» դեմ պայքարելու խնդիրները:

Պոկրովսկու և նրա դպրոցի սխալներն ու նրանց քննադատությունը:

### ՄԱՍՆ 1-ին

### Արևմտյան Յեվրոպայի, Ամերիկայի և Արևելքի յերկրների տնտեսական պատմություն.

III-2505գր



## ՀԻՆ ԱՇԽԱՐՀ

### Հատված 1-ին: Հին Արևելքի տնտեսական զարգացումը:

Ներածություն: Հին Արևելքի տնտեսակարգը: Նրա առանձնահատկությունները: Հին Արևելքի տնտեսական և քաղաքական պատմության ուղենիշները:

Հին արևելյան ստրկատիրությունը: Հին արևելյան համայնքի կայունությունը: Վոռոգման սիստեմը: Մարքսիզմի-լենինիզմի կլասիկների ասույթները հին արևելյան հասարակության մասին!

### 1. ՅԵԳԻՊՏՈՍ

Հին թագավորության ձևավորման նախադրյալները: Ստրկատիրությունը հին Յեգիպտոսում: Նոմերը: Վոռոգումնային շինարարությունը: Յերկրագործական տեխնիկայի զարգացումը: Արհեստները: Աշխատանքի բաժանման ձևերը: Թագավորական և տաճարային տնտեսությունը: Յեգիպտոսի տնտեսության նատուրալ բնույթը: Տաճարների և բուրգերի կառուցումը:

Գեղարվեստ, գեղարվեստական և արհեստի հուշարձանները:

Միջին թագավորությունը: Վոռոգումնային կառուցումները: Ճշգրիտ գիտությունների սաղմնավորումը: Չքավորների և ստրուկների ապստամբությունը: Նոր թագավորության կազմավորման պայմանները: Թեբեական դինաստիայի փարավոնների վոռոգումնային մելիորատիվ գործունեությունը: Առևտուրը: Խոշոր հողատիրության և ստրկատիրության աճը: Յեգիպտոսի տնտեսական և քաղաքական անկման պատճառները:

## 2. ԲԱԲԵԼՈՆԻԱ

Ստրկատիրական կարգերի սաղմնավորումը հարավային Միջագետքում: Ուրուկագինա թագավորի ռեֆորմները:

Համմուրաբու բաբելոնական թագավորության առաջացման նախապայմանները:

Համմուրաբու օրենսգիրքը, որպես Բաբելոնի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման աղբյուր:

Ստրուկները և գյուղացիները: Երկրագործական տեխնիկան: Բաբելոնի միջնորդական առևտուրը: Դրամային սիստեմը: Տաճարային առևտուրն և վաշխառությունը:

Նոր բաբելոնյան թագավորությունը: Նոր բաբելոնյան թագավորության տնտեսական զարգացումը: Առևտրական և վաշխառուական կապիտալի դերը: Նաբուգոդոնոսորի շինարարական գործունեությունը:

## 3. ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստանի նյութական կուլտուրան և տոհմական կարգերը 3-րդ և 2-րդ հազարամյակներում Մ.թ.ա. ըստ հնագիտական պեղումների տվյալների: Վեդան, որպես Մ.թ.ա. 2-րդ և 1-ին հազարամյակների սահմանամերձին Հնդկաստանում գոյություն ունեցած եկոնոմիկան և սոցիալական կարգերը բնութագրելու համար անհրաժեշտ աղբյուր:

Տոհմական կարգերի քայքայումը, ստրկատիրության աճը, դասակարգային շերտավորումը: Աշխատանքի բաժանման ձևերը: Գյուղական տերրիտորիալ



համայնքն և նրա դերը Հնդկաստանի պատմության տվյալ դարաշրջանում:

Առաջին խոշոր պետությունների ստեղծումը 1-ին հազարամյակի առաջին կեսում Մ.թ.ա:

Ինդոս և Գանգես գետերի հովիտներն և նրանց դերը: Ոռոգման դերը հնդկական բնակչությունների զարգացման գործում: Կաստային սիստեմի զարգացումը: Նրա կապը Հնդկաստանում կատարված դասակարգային շերտավորման հետ:

Բուդդայականության ծագումը, նրա սոցիալական էությունն առաջին շրջանում: Ալեքսանդր Մակեդոնացու հնդկական արշավանքը: Չանդրագուպտայի և աշոկայի թագավորությունները:

Արևմուտքի և Արևելքի հետ ունեցած առևտրական հարաբերությունների զարգացումը: Ֆեոդալականացման պրոցեսի ուժեղացումը: Տիրող դասակարգերի հարստության աճը:

Գյուղացիական ապստամբությունները: Արտադրության ֆեոդալական յեղանակը և ֆեոդալական մասնատվածությունը մ.թ. 1-ին հազարամյակի Մեջերքին:

## 4. ՉԻՆԱՍՏԱՆ

Նյութական կուլտուրան և տոհմական կարգերը Չինաստանում 2-րդ հազարամյակում Մ.թ.ա. ըստ հնագիտական պեղումների տվյալների: Խուանխե հովտի դերը:

Չժոուի շրջանը: Ստրկատիրության զարգացումը: Դասակարգային շերտավորումը: Արտադրողական

ուժերի զարգացումը 5-րդ 3-րդ դարերում մ.թ.ա.:

Վոռոգման աշխատանքները, գութանի արմատացումը, ոգտագործումը, յերկաթի տարածումը և այլն: Քաղաքները: Վաճառականության առաջացումը: Ֆեոդալականացման պրոցեսի ուժեղացումը:

Ցին-դինաստիայի եպոխան: Ֆեոդալական հարաբերությունները և ստրկությունը: Ճանապարհների և ջրանցքների շինարարությունը: Չինական մեծ պատը: Գյուղացիական ապստամբությունը: Խան-ի շրջանը: «Դեղին չալմաների» ապստամբությունը:

## Հատված 2-րդ անտիկ աշխարհի տնտեսական զարգացումը.

Ներածություն.- Անտիկ հասարակությունների առաջացման նախապայմանները:

Միջերկրական ծովը: Միջերկրական ծովի Արևելյան և Արևմտյան մասերը: Կապը Արևելքի և Եգեյան ծովի հետ: Հին Արևելքի կուլտուրայի ազդեցությունը:

### 1. ՀՈՒՆԱՍՏԱՆ

Կրետե-Միկենյան եպոխայի նյութական կուլտուրան և սոցիալական կարգեր: «Ոդիսականը» և «Իլիականը» որպես հոմերոսյան հասարակության եկոնոմիկան և սոցիալական կարգերը բնութագրելու համար անհրաժեշտ աղբյուրներ:

Բարձրագույն աստիճանի բարբարոսության մեծագույն ծաղկումը: Հունական տոհմը: Եկոնոմիկայում և սոցիալական կարգերում առաջացած տեղա-



շարժերը 8-րդ 7-րդ դարերում: Ռասակարգային հասարակության անցնելը:

Աթենական պետության ծագումը:

Հունական պոլիսը և նրա առանձնահատկությունները: Աշխատանքի բաժանման ձևերը: Արհեստային տեխնիկայի զարգացումը: Սոլոնի ռեֆորմները:

Աթենքի բարձրացումը, Աթենքի առաջնակարգությունը 5-րդ 4-րդ դ.դ. Հունական աշխարհում: Հույն-պարսկական պատերազմները և նրանց ազդեցությունը Հունաստանի եկոնոմիկայի վրա: Աթենքի տնտեսական կարգը 5-րդ և 6-րդ դարերում: Հունաստանի ներքին ծաղկումը Պերիկլեսի եպոխայում: Տնտեսության ստրկատիրական հիմքը: Ստրկական արհեստանոցը: (Երգաստերիոն) նրա տեխնիկան: Հողագործության տեխնիկան: Միջնորդական առևտուրը: Առևտուրը Մերձսևծովյան յերկրների հետ: Դրամական սիստեմը: Վաշխառությունը: Ստրկական և ազատ աշխատանքը:

Պելոպոնեսյան պատերազմը և նրա ազդեցությունը Հունաստանի եկոնոմիկայի վրա: Չորրորդ դարի ճգնաժամը: Մակեդոնիայի բարձրացումը: Ալեքսանդր Մակեդոնացին, նրա նվաճումների տնտեսական հետևանքները: Տնտեսական զարգացումը հելլենիզմի եպոխայում: Անտիկ (կլասիկ) ստրկության [illegible] առանձնահատկությունները, հին արևելյանի և նոր ժամանակի ամերիկականի համեմատությամբ:

### 2. ՀՌՈՄ

Տոհմը և [illegible] Հռոմում: Ստրկությ

նախապետական բնույթը Հռոմի հնագույն /թագավորական/ շրջանում:

Պունիկյան պատերազմներն և նրանց ազդեցությունը Հռոմի էկոնոմիկայի վրա: Պարտված պրովինցիաների կողոպտումը:

Ստրուկների, վոսկու, արծաթի և այլնի ներհոսանքը: Վաշխառության զարգացումը: Մանր հողագործության պայքարը խոշորի դեմ: Հողային սեփականության համակենտրոնացումը:

Գյուղացիության աղքատացումը: Ստրուկների օգտագործման տարբեր տեսակները: Ստրկությունը գյուղատնտեսության մեջ: Ստրկատիրական պլանտացիաները: Հովիվ ստրուկները: Ստրկատիրական արհեստանոցներ: Տնային ստրուկները: Ստրկատիրական շուկան: Ստրկության ազդեցությունը ազատ աշխատանքի վրա: Անտիկ լյումպեն-պրոլետարիատը: Աշխատանքի բաժանման ձևերը Հռոմում: Հռոմի և նրա պրովինցիաների փոխհարաբերությունների բնույթը: Ստրկատիրական տնտեսության անկումը կայսրության շրջանում: Այդ անկման պատճառները: Արտադրության ստրկատիրական յեղանակի ներքին հակասություններն և նրա լճացած բնույթը: Անտիկ տեխնիկան: Ստրուկների հեղափոխությունը: Ազատարձակվածները: Կոլոնատի զարգացումը: Քրիստոնեյության ծագումը:

## ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

Հատված 1-ին. Արևմտյան Յեվրոպայի և Առաջավոր Ասիայի տնտեսական զարգացումը 5-րդ, 6-րդ դարերում:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ՝ Միջնադարյան պատմության ժամանակագրական շրջանակները:

1. Արևմտյան հռոմեական կայսրության սոցիալ-տնտեսական կարգը 3-րդ - 5-րդ դարերում.

Խոշոր հողային սեփականության աճը: Արտադրության ստրկատիրական յեղանակի քայքայումը: Կոլոնատի զարգացումը: Մասնավոր իշխանության աճումը: 3-րդ, 4-րդ դդ. հռոմեական կալվածքի կազմակերպությունը: Քաղաքը 3-րդ, 4-րդ դարերի հռոմեական կայսրության մեջ: Արդյունաբերության, գյուղատնտեսության և առևտրի անկումը:

Դրամական շրջանառությունը: Ստրուկների հեղափոխությունները և նրանց դերը ստրկատիրական հասարակության վերացման գործում: Ճնշված դասակարգերի վերաբերմունքը կայսրության վրա հարձակվող բարբարոսական ցեղերի հանդեպ:

Քաղաքների անկումը Արևմտյան հռոմեական կայսրության գոյության վերջում: Տնտեսական կենտրոնների նատուրալացումը:

2. Հին գերմանացիների սոցիալ-տնտեսական կարգը Արևմտյան հռոմեական կայսրության նվաճումից առաջ և նվաճման ժամանակ:

Կեսարի ժամանակաշրջանի գերմանացիները: Տնտեսական կարգը: Հողագործության և անասնապահության զարգացման մակարդակը: Որսորդության դերը: Ազգաբնակչության շարժումը: Տոհմային կազմակերպությունը, առաջնորդները: Տակիտոսի ժամանակաշրջանի գերմանացիները:

մանների մեծ մասի վերջնական անցումը նստակյաց կյանքին: Տոհմական համայնքը, տոհմական արիստոկրատիան:

Դասակարգային շերտավորման սկիզբը: Ստրկատիրությունը և նրա առանձնահատկությունները գերմանցիների մոտ: Դրուժինաները: Արքայական իշխանության բնույթը: Ցեղային միասնության և ցեղերի միությունների անհաստատությունը:

«Ժողովուրդների մեծ գաղթը» նրա տնտեսական պատճառները:

Հոների արշավանք, գերմանական ցեղերի ջախջախումը նրանց կողմից և գերմանական ցեղերի 4-րդ դարի վերջից սկսված տեղաշարժումները դեպի Արևմտյան Եվրոպան:

Կայսրության և գերմանացիների փոխհարաբերությունները: Գերմանական առանձին ցեղերի կուլտուրական զարգացման աստիճանի տարբերությունները: Գերմանական ցեղերի նյութական կուլտուրայի վերելքը 3-րդ, 4-րդ դարերի մոտ:

Բուրժուական պատմաբանների /Դոպշ, Պետրուշևսկի և այլն/ հայացքները գերմանացիների մասին և նրանց քննադատությունը:

Գերմանական ֆաշիզմի արդի ռասսայական «տեսությունները» հին գերմանացիների մասին և նրանց քննադատությունը:

3. Կելտերի սոցիալ-տնտեսական կարգն և նյութական կուլտուրան.

Գալլերը, բրիտները, գաելները: Կելտերի հասարակակարգը նախքան Գալլիայի նվաճումը



Կեսարի կողմից:

Ստրկության զգալի զարգացումը:

Ծառայագրական ստրկություն: Տոհմական հարաբերությունների քայքայումը: Նյութական կուլտուրայի համեմատաբար բարձր մակարդակը: Երկրագործության, անասնապահության, ձկնորսության, հանքագործության և արհեստների զարգացումը: Մետաղների մշակման և գործվածքների արտադրության բնագավառում ձեռք բերված հաջողությունները: Գյուղատնտեսական տեխնիկան: Գետային նավագնացությունը և ծովագնացությունը:

Ճանապարհների կառուցումը:

Ներքին և արտաքին առևտրի զգալի զարգացումը:

Ռոմանականացման պրոցեսը Գալլիայում Կեսարի կատարած նվաճումից հետո: Բագաուդների ապստամբությունը: Գալլիայի տնտեսական և կուլտուրական անկումը գերմանական ցեղերի կողմից նրան նվաճելուց հետո: Գերմանական ցեղերի դերը նոր ֆեոդալական հարաբերությունների զարգացման գործում: Գերմանական ցեղերի միաձուլվելը կելտական բնակչության հետ: Կելտերի և կելտո-հռոմեական կուլտուրայի նշանակությունը ֆրանկական և անգլիական պետությունների առաջացման և բարձրացման գործում:

4. Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը. Մերովինգների և Կարոլինգների ֆրանկական պետության մեջ:

Բարբարոսական թագավորությունների կազմավորումը Արևմտա-Հռոմեական կայսրության տերրիտորիայում

գերմանական նվաճումների կապը ստրուկների և կոլոնների հեղափոխական շարժման հետ: Արևմտյան սլավոնները:

Ֆրանկների պետության առաջացման և բարձրացման պատճառները: Մերովինգների ժամանակաշրջանի հասարակական կարգը: «Սալիական օրենսգիրքը» վորպես այդ հասարակարգի ուսումնասիրության աղբյուր:

Ազատ համայնք մարկը և նրա քայքայման սկիզբը:

Ալլոդը: Հողերի բաշխումը (նվիրումը) զորավորներին և դրուժիննիկներին և խոշոր հողատիրության աճը:

Հռոմեյացոց պահպանված խոշոր կալվածքների դերը:

Մագնատների դասակարգի կազմվելը և նրա պայքարը արքայական իշխանության դեմ: Յեկեղեցական խոշոր հողատիրությունը:

Կարլոս Մարտելլի սկսած և Կարլոս Մեծի կողմից ավարտված ագրարային հեղաշրջումը: Բենեֆիցիան և պրեկարիան: Կարլոս Մարտելի ռազմական ռեֆորման և նրա ազդեցությունը հողային կախյալ հարաբերությունների վրա: Հողային մագնատներին սենյորալ իրավունքներ վերապահելը: Վասսալները, իմմունիտետ: Ազատ գյուղացիության ճորտացման պրոցեսը: Գյուղացիական ապստամբությունները: Կարլոս Մեծի մղած պատերազմների ազդեցությունը գյուղացիության դրության վատթարացման վրա: Կարոլինգների պետության տրոհման պատճառները:



Գյուղատնտեսությունը վորպես տնտեսական կյանքի հիմքը: Քաղաքների - վորպես տնտեսական կենտրոնների - համարյա լիակատար բացակայությունը:

Ֆեոդալիզմի ծագման խնդիրը: «Ֆեոդալիզմը բնավ չեն փոխադրել Գերմանիայից պատրաստի ձևով. նրա ծագումը խարսխված է ռազմական այն կազմակերպության վրա, վորն ունեյին բարբարոսական զորքերը հենց նվաճման ժամանակ և միայն նվաճումից հետո յե, վոր այդ կազմակերպությունը նվաճված յերկրներում գտնված արտադրական ուժերի շնորհիվ զարգացավ և դարձավ իսկական ֆեոդալիզմ /Մարքս և Ենգելս - соч. том IV страница 64/:

Ֆեոդալիզմի ծագման վերաբերյալ բուրժուական տեսությունների քննադատությունը: Գերմանիստները և ռոմանիստները:

Դոպշի և Պետրուշևսկու հայացքների քննադատությունը: Գերմանական ֆաշիզմի «տեսությունների» քննադատությունը:

## 5. Ֆեոդալական կալվածքի տնտեսությունը Կարոլինգների պետության մեջ:

Կարոլինգյան դարաշրջանի ֆրանկական կալվածքի ուսումնասիրման հիմնական աղբյուրները /պոլիպտիկներ, կապիտուլյարները և այլն/ խոշոր կալվածքի կազմակերպումը Ֆրանսիայում 8-րդ, 9-րդ դ.դ.: Տիրական և գյուղացիական հողը: Չհերկված հողանդակների /угодий/ օգտագործումը: Տիրական և գյուղացիական տնտեսությունների կապը: Գյուղացիական հա-

մայնք մարկը ֆեոդալական կալվածքի ներսում։

Բնական տնտեսություն։ Յեռադաշտային սիստեմի անցնելը։ Գյուղատնտեսական տեխնիկան։ Գյուղացիների հողաբաժինները։ Ճորտականների /держатели/ կատեգորիաները /կոլոններ, լիտեր, սերվեր/։

Ֆեոդալի հանդեպ նրանց կախյալ դրությունը և այդ կախվածության բնույթը։ Ֆեոդալական ռենտայի տեսակները։ Արհեստը ֆեոդալական կալվածքում։

## 6. Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը անգլո-սաքսերի մոտ.

Անգլո-սաքսերի սոցիալական կարգը նրանց կողմից Բրիտանիան նվաճելուց [illegible]։ Կելտա-հռոմեական կուլտուրայի ազդեցությունը։ Երլերը, կերլերը, կիսաազատները, ստրուկները։ Ազատ գյուղը։ Անգլո-սաքսական հասարակության ֆեոդալականացումը, այսինքն հողատիրական արիստոկրատիայի աճը և գյուղացիության կախվածության ուժեղացումը։

Հին հասարակական միությունների քայքայումը և մասնավոր իշխանության զարգացումը կոմենդացիաների և արքայական շնորհումների ուղիով։ Ֆեոդալական կալվածքի /մենոր/ առաջացումը։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացման դանդաղ տեմպը անգլո-սաքսոնական Անգլիայում։ Նորմանական նվաճման ազդեցությունը ֆեոդալիզմի զարգացման վրա Անգլիայում։ Ավատական սիստեմի յուրահատկությունը Անգլիայում։

«Ահեղ դատաստանի գիրքը»։



Առևտրական հարաբերությունները մայրցամաքի հետ. Բրդի արդյունաբերության չաղ զարգացումը։

## 7. Բյուզանդիայի տնտեսական զարգացումը V-րդ XI-րդ դ.դ.:

Ֆեոդալիզմի զարգացման առանձնահատկություններն Արևելյան Հռոմեական կայսրության մեջ։ Արդյունաբերության և առևտրի [illegible] զարգացումը։ Քաղաքների դերը։ Ֆեոդալականացման դանդաղ տեմպը։ Ստրկության էլեմենտները։

Պարսիկների, հոների, վանդալների, ավարների և սլավոնների դեմ մղած պայքարը։

Յուստինիանոսի տնտեսական քաղաքականությունը։ Պետական մոնոպոլիաները։ Պայքար խոշոր սենատորական հողատիրության դեմ։

«Նիկա» ապստամբությունը։ Յեկեղեցական և վանական հողատիրության աճը։

Բյուզանդիան Յուստինիանոսի ժառանգորդների օրոք։ Բյուզանդիան և Սլավոնները։ Արևմտյան և հարավային սլավոնների էկոնոմիկան և սոցիալական կարգը։ Սլավոնների ներթափանցումը Բյուզանդական կայսրության սահմանները։ Բանակի սլավոնականացումը։ Պարսիկների և արաբների դեմ մղած պայքարում ունեցած կորուստները։ Թեմերի կազմակերպման Իսավրական դինաստիայի կայսրների ժամանակ։

Պատկերամարտիկ կայսրների պայքարը յեկեղեցական հողատիրության դեմ։

Բյուզանդական առևտրի զարգացումը 9-րդ և

10-րդ դ.: Կոստանդնուպոլիսը, որպես առևտրական միջնորդ Արևելքի և Եվրոպայի միջև: Մեծ ջրային ճանապարհը վարյագներից մինչև հույները («Из варяг в греки») և նրա նշանակությունը Բյուզանդիայի համար:

Արդյունաբերության զարգացումը:

Բյուզանդական համքարությունները և նրանց ենթարկվելը կառավարական իշխանությանը: Մակեդոնական և դինաստիայի կայսրերի պայքարը «դինատների» /մեծամեծների/ դեմ: Բյուզանդիան և բուլղարական թագավորությունը 9-րդ դ.: Բյուզանդիայի կուլտուրական ազդեցությունը սլավոնների վրա:

Կոմնենոսների դինաստիան և նրա կապը խոշոր հողատիրության հետ: Պրոնոյաները: Ազատ գյուղացիության մնացորդների ճորտացումը:

Բուլղարների և ռուսների դեմ մղած կռիվները և նրանց ազդեցությունը Բյուզանդիայի էկոնոմիկայի վրա:

Ճանապարհների գրավումը վենետիկցիների կողմից՝ կղզիներում և թուրքերի կողմից՝ հարավում ու այդ կապակցությամբ բյուզանդական առևտրի ճգնաժամը: Առևտրի անկումը: Բյուզանդիայի տերրիտորիայի կրճատումը 11-րդ դարի վերջերին: Բյուզանդիայի նյութական կուլտուրան և նրա ազդեցությունը Կիևյան Ռուսիայի վրա:

8. <u>Արաբական պետությունների տնտեսական զարգացումը 6-րդ – 11-րդ դ.դ.:</u>

Մինչմուսուլմանական Արաբիայի էկոնոմիկան և



սոցիալական կարգը: Քոչվորական անասնապահությունը և օազիսային երկրագործությունը:

Տոհմի քայքայումը և ստրկատիրության զարգացումը: Առևտուրը և քաղաքները: Արաբական առևտրի ճգնաժամը Հաբեշստանի հետ մղած պատերազմների հետևանքով: Ոռոգման սիստեմների կործանումը: Արոտավայրերի պակասությունը: Արաբական նվաճումների սոցիալ-տնտեսական պատճառները:

Իսլամի դերը արաբական ցեղերի միացման և արաբական էքսպանսիայի գործում:

Արաբների նվաճումների կապակցությամբ առաջացած փոփոխությունները, նրանց էկոնոմիկայի և սոցիալական կարգի մեջ:

Օմայաների խալիֆայության տնտեսական զարգացումը: Աբասյանների խալիֆայությունը: Ֆեոդալիզմի ամրապնդումը: Գյուղացիության ճորտացումը: Հակաֆեոդալական շարժումները: Ոռոգման տեխնիկայի զարգացումը, արհեստի աճումը: Արաբների առևտրական ճանապարհները և միջազգային առևտուրը: Ճշգրիտ գիտությունների զարգացումը և նրա ազդեցությունը տնտեսական զարգացման վրա: Արաբական կուլտուրան և նրա ազդեցությունը միջնադարյան Եվրոպայի վրա: Խալիֆայության անկման պատճառները:

## Բաժին 2-րդ. Արևմտյան Եվրոպայի և Արևելքի երկրների տնտեսական զարգացումը 12–15 դ.դ.:

1. Արևմտյան Եվրոպայի տնտեսական [illegible] քաղաքները [illegible] արշավանքների [illegible]: Արհեստ[illegible]

գյուղատնտեսությունից և քաղաքների վերելք արհեստավորական և առևտրական կենտրոնների ծագումը:

Քաղաքների տիպերը: Քաղաքային շուկայի առաջացումը:

Փոխանակության զարգացումը քաղաքի և գյուղի միջև: Կալվածքի շահագործման սիստեմում կատարված փոփոխությունները: Գյուղատնտեսության ինտենսիֆիկացիան: Գյուղացիական պարհակների փոխարկումը: Ֆեոդալական ճնշման ուժեղացումը: Գյուղացիական ապստամբությունները:

Առևտրի զարգացումը: Արևմտյան Եվրոպայի կապերը Մերձավոր Արևելքի հետ և առևտուրը Միջերկրական ծովի ավազանում: Հյուսիսային Իտալիայի առևտրական քաղաքները:

Խաչակրած արշավանքների տնտեսական հետևանքները: Արևելքի հետ ունեցած առևտրական կապերի ուժեղացումը: Իտալական քաղաքների բարձրացումը: Տեխնիկական նոր պրիոմների գործադրումը արհեստների բնագավառում և արտադրության նոր ճյուղերի զարգացումը: Կաթոլիկական յեկեղեցին և նրա ազդեցությունը Արևմտյան Եվրոպայի տնտեսության վրա միջին դարերում:

## 2. Ֆեոդալական քաղաքը Արևմտյան Եվրոպայում. XIII – XV դ. դ.

ա) XIII – XV դ. դ. քաղաքային արհեստը և նրա կազմակերպությունը:

Համքարային վարպետի արհեստանոցը՝ վորպես



քաղաքային արդյունաբերության սկզբնական ձևը: Համքարությունների առաջացման պատճառները: Համքարական կազմակերպության ֆունկցիաները: Համքարության մեջ ընդունելու կանոնները: Համքարական տիպիկ կանոնագրության վերլուծումը:

Սոցիալական պայքարը համքարությունների ներսը: Յենթավարպետից վարպետ դառնալու հնարավորությունը: Մշտական յենթավարպետների շերտի առաջացումը: Համքարությունների քաղաքականությունը յենթավարպետների նկատմամբ: Յենթավարպետների ընկերությունները: Արտահամքարական բանվորները և նրանց վիճակը: Արհեստավորական արհեստանոցների մանր ծավալը: Աշխատանքի բաժանման բացակայությունն առանձին արհեստանոցների ներսում և աշխատանքի աննշան բաժանումը տարբեր արհեստների միջև:

Արհեստային տեխնիկան: Ձուլակությունը: Հանքագործությունը: Ռազմա-ծովային գործի տեխնիկայի զարգացումն և նրա ազդեցությունը արդյունաբերության տեխնիկայի վրա:

Արհեստային շինվածքների վաճառահանման գործի կազմակերպումը:

Արդյունաբերության նոր ձևերի սաղմնավորումը Հյուսիսային Իտալիայում և Ֆլանդրիայում

բ) Դասակարգերը և սոցիալական պայքարը 13 – 15-դ. դ. Արևմտյան Եվրոպական քաղաքներում:

Քաղաքային բնակչության սոցիալական կազմը: Գույքերի բաշխումը միջնադարյան քաղաքում (XIII – XV դ. դ. գերմանական քաղաքների տվյալներ

համաձայն/: Քաղաքների պայքարը սենյորների դեմ: Սոցիալական պայքարը միջնադարյան քաղաքում: Քաղաքային պլեբեյների բուլուրյան պատճառները: Արհեստավորների պայքարը պատրիկների դեմ: Քաղաքի դերը ֆեոդալական կարգերի քայքայման գործում, Գյուղը, որպես ելակետ միջնադարյան խոշորագույն ապստամբությունների համար:

## 3. ԻՏԱԼԻԱՆ XII– XV դ.դ.

Իտալիայի տնտեսական վերելքը Միջերկրածովյան առևտրի աճման կապակցությամբ: Գյուղացիության ազատագրումը: Իտալիայի քաղաքական մասնատվածությունը: Հյուսիսի քաղաքային հանրապետությունների տնտեսական աճը: Արդյունաբերության նոր ձևերի սաղմնավորումն այդ հանրապետություններում: Վենետիկի և Ջենովայի առևտրական նշանակությունը; մրցակցությունը նրանց միջև և նրանց դերը XII–XV դ.դ. Արևմտա-Յեվրոպական առևտրի բնագավառում: Միլանը: Առևտուրն և բանկային գործն Ֆլորենցիայում: և Մեդիչի բանկիրական տունը: Առևտրական և վաշխառուական կապիտալը արդյունաբերության մեջ: Մանուֆակտուրայի նախահիմքերը:

Գյուղացիության դրությունը: Գյուղացիական շարժումը: Դոլչինոյի ապստամբությունը:

Սոցիալական պայքարը Ֆլորենցիայում: Չոմպերի ապստամբությունը: Գյուղատնտեսությունը Իտալիայում: Գյուղատնտեսական տեխնիկան:

Պապության տնտեսական դերն Իտալիայում:



Պապական գանձատան յեկամուտները: Պապությունն և բանկային գործի զարգացումն Իտալիայում: Իտալիայի տնտեսական անկման սկիզբը:

## 4. ՖՐԱՆՍԻԱՆ XII– XV դ.դ.

Կարևորագույն ֆեոդալական տիրապետությունները Ֆրանսիայի տերրիտորիայի վրա: Արքայական իշխանության ուժեղացման սոցիալ-տնտեսական պատճառները: Ֆրանսիական գյուղը: Գյուղատնտեսական կուլտուրաները և յերկրագործության սիստեմը, գյուղատնտեսական տեխնիկան: Ֆրանսիական գյուղացիության կատեգորիաները, նրանց վիճակը և պարհակները XII– XV դ.դ:

Սերվերը, վիլլանները, ազատ նորաբնակները: Ապրանքային տնտեսության աճումը: Ներքին գաղութացումը Ֆրանսիայում XII–XIV դ.դ. և նրա տնտեսական հետևանքները: Գյուղացիական պարհակների փոխադնումը: Վիլլանության աճն և սերվերի թվի աստիճանական նվազումը:

Հարյուրամյա պատերազմն և ֆրանսիական գյուղացիության քայքայումը: Քաղաքների աճն և նրանց պայքարը ֆեոդալների դեմ: Ֆլանդրիայի արդյունաբերական զարգացումը: Նրա արդյունաբերության դերը այդ ժամանակվա Եվրոպայում: Ֆրանսիական քաղաքների պայքարը Ֆլանդրիայի համար:

Փարիզի տնտեսական աճը: Եթյեն Մարսելի և ապստամբությունը Փարիզում: Քաղաքային և գյուղա-

կրական շարժումների կապը: Ժակերիան և նրա ղեկավար Գիյոմ Կալը: Ժողովրդական այլ շարժումները: Հարյուրամյա պատերազմի վերջին էտապը: Մարգը Ժաննա-Դ, Արկի մասին: Ֆրանսիայի միավորումը Լյուի XI-ի ժամանակ, նրա տնտեսական քաղաքականությունը: Տնտեսությունը XIII-XV դ. դ. Ֆրանսիայում: Տոնավաճառները Շամպայնում: Հարավային Ֆրանսիայի քաղաքների մասնակցությունը միջերկրածովյան առևտրում:

## 5. ԱՆԳԼԻԱՆ XII-XV դ.դ.

Ֆեոդալական կալվածքի կազմակերպումն և գյուղացիության դրությունն Անգլիայում XII-XIV դ.դ.:

Հարյուրամյա պատերազմի ազդեցությունն անգլիական էկոնոմիկայի վրա:

Անգլիական բրդի հարաճուն պահանջարկը Ֆլանդրական և տեղական արդյունաբերության կողմից: Գյուղատնտեսության ապրանքայնության զարգացումը:

Գյուղացիական պարհակների կանխիկացման պրոցեսը: Համայնական հողերի հափշտակումը ֆեոդալների կողմից: Վարձու աշխատանքի յերևալը գյուղատնտեսության մեջ: Տնտեսության կազմակերպությունը XIII-XIV դ.դ. անգլիական մենորում: Մենորների տիպերը և չափերը: Մենորիալ կարգի էվոլյուցիան: Երկրագործության սիստեմը, գյուղատնտեսական կուլտուրաները և գյուղատնտեսական տեխնիկան: Մենորների կառավարումը, վարձու աշխատանքի և տիրական ինվենտարի դերը, շուկայի դերը մենորիալ տնտեսության մեջ: Եկամուտի տարբեր աղբյուրները մենորիալ տնտեսության մեջ:



«Սև մահի» ազդեցությունը անգլիական գյուղի վրա XIV-րդ դ.դ. յերկրորդ կեսում: Եդուարդ III-ի և Ռիչարդ II-ի «Բանվորական օրենսդրությունը»: Ֆեոդալական ռեակցիան: Ուոտ Տայլերի ապստամբությունը: Ապստամբության պատճառները, ապստամբների պահանջները, նրանց պարտության պատճառները: Ճորտատիրական իրավունքի թուլացումը և նրա աստիճանական վերացումն Անգլիայում:

Բրդեղենի արդյունաբերության զարգացումն Անգլիայում: Ֆլամանդական ջուլհակների գաղթն Անգլիա և նրա ազդեցությունն անգլիական արդյունաբերության հետագա զարգացման վրա: XIV-XV դ.դ. անգլիական քաղաքների տնտեսական քաղաքականությունը: Քաղաքները, արդյունաբերական գյուղերը և տոնավաճառները:

## 6. ԳԵՐՄԱՆԻԱՆ XIII-XV դ.դ.

Գյուղը Գերմանիայում XIII-XV դ.դ.:

Կալվածատիրական տնտեսության կազմակերպումը: Տիրական և գյուղացիական հողեր: Երկրագործական սիստեմները, գյուղատնտեսական կուլտուրաները, գյուղատնտեսական տեխնիկան: Հարկադիր ցանքաշրջանառություն: Գյուղացիների դրությունը և պարհակները XIII-XIV և XV-րդ դ. առաջին կեսում:

Սլավոնական հողերի և Պրուսիայի գերմանական գաղութացումը:

Սլավոնների և պրուսների ստրկացումը, կողոպտումը և վոչնչացումը գերմանական ասպետների կողմից: Ռուսների հաղթանակը սառցային ճակատամարտում «ասպետ-շների» դեմ և դեպի արևելք շարժվող գերմանացիների առաջխաղացման կասեցումը:

Քաղաքների աճումը և տերիտորիալ իշխանությունների առաջացումը: Կենտրոնական իշխանության խորտակումը: Դրամական ռենտայի աճը և գյուղացիության շերտավորումը: Գյուղացիության կախվածության թուլացումը: Ֆեոդալական շահագործման սաստկացումը XIV-րդ դ. վերջից սկսած:

Դասակարգային պայքարը քաղաքներում: Քաղաքների միությունները: Հանզան: Նրա կազմը, կազմակերպությունն և գործունեությունը: Հանզայի առևտրական հաստատությունները այլ յերկրներում: Հանզայի կազմալուծման պատճառները: Հարավային Գերմանիայի առևտրական կենտրոնները: Գերմանիայի քաղաքների արդյունաբերությունը XIV – XV դ. դ. Գերմանիայի տարբեր շրջանների արդյունաբերական զարգացման մեջ յեղած տարբերությունը:

Գերմանիայի քաղաքական մասնատումը, դրա պատճառները և տնտեսական նշանակությունը:

## Դ. ՉԻՆԱՍՏԱՆԸ ՅԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ V – XV դ. դ.

Միջին դարերի ժամանակագրական շրջանակներն և Հնդկաստանի ու Չինաստանի ֆեոդալիզմի պատմության պերիոդիզացիան: Հնդկաստանի ֆեոդալական ցրվածությունը I-ին հազարամյակի յերկրորդ կեսում: Արաբ-



ների ներխուժումը VIII դ.: Այդ ժամանակաշրջանի հնդկական համայնքը, նրա կայունության պատճառներն և դրանով պայմանավորված լճացած վիճակը հնդկական էկոնոմիկայում: Առևտրական հարաբերությունները Յեվրոպայի և Չինաստանի հետ: Արաբների դերը: Մուսուլմանների նվաճումները X-դարի վերջից սկսած, նրանց տնտեսական պատճառները: Փոփոխությունները յերկրի ագրարային կարգում և նրանց ազդեցությունը գյուղացիության դրության վրա: Իկտան և իկտադորները: Վակուֆները: Կաստային սիստեմի նվաղությունը: Հնդկաստանի ֆեոդալական ցրվածությունն և տնտեսական անկումը XIV դ. վերջում և XV դ.: Այդ պայմանների նշանակությունը պորտուգալական նվաճումների հեշտացման համար:

Չինաստանը: Յանցզի ավազանի տնտեսական զարգացումը V – VI – դ. դ.: Առևտրական հարաբերությունները Մետաքսի հին ուղիով:

Չինաստանի տնտեսական վերելքը Տան-դինաստիայի շրջանում VII – IX – դ. դ.: Յեկեղեցական հողատիրությունը: Հարկային սիստեմը: Թեյի կուլտուրայի զարգացումը: Արհեստի նոր ճյուղերը: Հանքագործության զարգացումը: Առևտրական աշխույժ հարաբերությունները Կենտրոնական և Արևմտյան Ասիայի հետ: Արաբների դերը: Չինական կալվածային հողատիրության աճում IX – X դ. դ.: Գյուղացիության շահագործման ուժեղացումը: Գյուղացիական պատերազմը IX – դ. և նրա ազդեցությունը Չինաստանի սոցիալական կարգի վրա:

Ֆեոդալիզմի զարգացման ձևերը Սուն-դինաստիայ

շրջանում X-դարի վերջերից սկսած մինչև XII-դ. քաղաքների վորպես առևտրա-արհեստավորական կենտրոնների աճումը, ներքին առևտրի զարգացումը:

Գրաստպության վերածվելն արհեստի մի կարևոր ճյուղի, Գիլդերի և համքարությունների զարգացումը: Արծաթի մուտքը շրջանառության մեջ: Դասակարգային պայքարը: Գյուղացիների և առևտրականների ապստամբությունները: Վան-Ան-Շիի ռեֆորմները: Տունգուսների ներխուժումը: Գյուղացիական ապստամբություններ XII-դարում:

Չինաստանի նվաճումը մոնղոլների կողմից XIII դ.: Մարկո Պոլոն այդ ժամանակաշրջանի Չինաստանի էկոնոմիկայի մասին: Մոնղոլների վտարումը յերկրից և Չինաստանի տնտեսական զարգացումը XIV դ. յերկրորդ կեսում և XV դ.: Միջնադարյան եպոխայի Չինաստանի նյութական և հոգևոր կուլտուրայի մակարդակի համեմատությունը Արևմտյան Յեվրոպայի հետ:

## 8. Առևտրական կապերը և հաղորդակցության միջոցները XII - XV դ. դ.:

ա) Արևմտյան Յեվրոպայի տնտեսական աշխարհագրությունը XII - XV դ. դ.:

Ֆլանդրիան և Հյուսիսային Իտալիան, վորպես հիմնական արդյունաբերական ռայոններ: Արդյունաբերական արտադրության տեղական կենտրոնները: Անգլիան և Իսպանիան, վորպես բուրդ մատակարարող յերկրներ: Անգլիայի տնտեսական հետամնացությունը տվյալ շրջանի սկզբին:



բ/ Արևմտյան Յեվրոպայի XII - XV դ. դ. առևտրի ընդհանուր բնութագիրը: Առևտրի զարգացումն Արևելքի հետ խաչակրաց արշավանքներից հետո: Առևտրական հարաբերությունները Չինաստանի հետ: Ներքին առևտրի աճում: Առևտրական շրջանառությունների ծավալը XII-XV դ. դ.: Առևտրի կազմակերպումը: Վաճառականական գիլդերը: Տոնավաճառներն և նրանց դերը: Տոնավաճառները Շամպայնում XII-XIV-դ. դ.: Առևտրի օբյեկտները: Հաշվապահության սաղմնավորումը.

գ/ Առևտրական ճանապարհները և հաղորդակցության միջոցները:

Գլխավոր ծովային և ցամաքային առևտրական ճանապարհների ուղղությունը: Ճանապարհների վիճակը: Ցամաքային ուղեփակները /Զաստավա/: Ծովահենները և ցամաքային ավազակները: Նավատորմիղի վիճակը և ծովագնացության տեխնիկան:

Նոր տիպի նավերի յերևալը: Կողմնացույցի տարածումը:

դ/ Դրամական շրջանառությունը և վարկը XII-XV դ. դ.:

Թանգարժեք մետաղների անբավարար քանակը: Դրամագործության վիճակը:

Վոսկեդրամի պատրաստման սկիզբը Արևմուտքում: Հիմնական դրամանիշային միավորները: Տեղային և հաշվային դրամանիշները: Դրամափոխները: Տոկոսը: Իտալական բանկիրները: Ֆլորենցիան, վորպես վարկային կենտրոն: Թագավորների ֆեոդալների և քաղաքների փոխառությունները: Վարկն առևտրի մեջ:

Վարկի վաշխառուական բնույթը:

<u>Հատված III-րդ Նախասկզբնական կու-տակման դարաշրջանը.</u>

Ֆեոդալիզմի քայքայումը և կապիտալիզմի զար-գացման առաջին էտապը: (Ամերիկայի գյուտից սկսած մինչև 18-րդ դարի 60-ական թվականները:

1. Մեծ հայտնաբերումները և գաղութների հա-փշտակման և թալանի սկիզբը:

ա/ Իսպանիայի և Պորտուգալիայի սոցիալ-տնտե-սական բնութագիրը:

«Ռեկոնկիստան»: Իսպանիայի էկոնոմիկան մավ-րերի վտարումից հետո: Գյուղատնտեսության անկու-մը, արդյունաբերության զարգացումը: Կաստիլիայի և Կատալոնիայի քաղաքները:

Իսպանիայի և Պորտուգալիայի տնտեսական և սոցիալական կարգը XV և XVI-դ.դ.-ի սկզբում: Ինչու-այդ պետությունները ռահվիրա հանդիսացան գա-ղութային հափշտակումների գործում: Մավրերի դեմ մղած պայքարում ձևավորված ռազմա ֆեոդալական բազմաթիվ կադրերի առկայությունը: Միջազգային առևտրա-կան ճանապարհների տեղաշարժն և նրա նշանակու-թյունը: Պիրենյան թերակղզու աշխարհագրական դիրքը:

բ/ Ամերիկայի և Հնդկաստանի սոցիալ-տնտեսա-կան կարգը յեվրոպացոց նվաճումներից առաջ:

Բնակչության տեղաբաշխման և կուլտուրական մակարդակի տարբերությունները Ամերիկայի տարբեր մասերում: Ժողովրդական տնտեսությունը, սոցիալա-



կան կարգը և կուլտուրան Մեքսիկայում և Պերուում: Հնդկայիական ցեղերի զարգացման մակարդակը Ամե-րիկայի այլ մասերում: Տեղական կուլտուրական բույ-սերի տեսակները: Հետագայում յեվրոպացիների կող-մից Ամերիկա ներմուծված բույսերն ու կենդանի-ները: Հնդկաստանի էկոնոմիկան և քաղաքական կարգը XV դարի վերջում և XVI-դարում:

գ/ XV-XVI դ.դ. մեծ աշխարհագրական հայտ-նագործումները և Իսպանիայի ու Պորտուգալիայի նվաճումները:

Մեծ աշխարհագրական հայտնագործումների տըն-տեսական նախադրյալները: Յեվրոպական առևտուրն Արևելքի հետ XV դարում և նրա զարգացումը խանգա-րող խոչընդոտները: Դեպի Հնդկաստան տանող ուղղակի ծովային ճանապարհի վորոնումները: Յեվրոպացիների աշխարհագրական պատկերացումները XV-դարում: Պորտուգալացիների առաջխաղացումն Աֆրիկայի շուրջը: Հենրիխ Ծովագնացը: Դիասը: Վասկո-դը-Գաման: Կոլումբոսը և Ամերիկայի գյուտը: Կաբ-րալը Բրազիլիայում: Մագելլանը:

Պորտուգալացիների պայքարը արաբների դեմ և արաբների միջնորդական դերի վերացումն Արևելյան առևտրի մեջ:

Պորտուգալացիների գաղութային հափշտակում-ները Հնդկաստանում: Կոնկվիստադորները: Պոր-տուգալացիների նվաճումները Բրազիլիայում. [illegible] նիայի և Պորտուգալիայի տնտեսական [illegible] ների շնորհիվ, նրանց հետագա տնտեսական ան-

կումը և դրա պատճառները:

դ/ Հոլանդիայի, Անգլիայի, Ֆրանսիայի կողմից գաղութային հափշտակումների ուղին բռնելը: Գաղութների համար մղված պայքարը XVI - XVIII դ.դ.:

Անգլիան, Ֆրանսիան և Հոլանդիան բռնում են գաղութներ ձեռք բերելու ուղին:

Պորտուգալացիների վտարումը Հնդկաստանից և Ինդոնեզիայից, անգլիացիների և հոլանդացիների կողմից:

2. Հոլանդիան XVI - XVII դ.դ.: Հոլանդիայի արդյունաբերական աճը: Արդյունաբերության կապիտալիստական ձևերի զարգացումը: Մահուդի և մետաքսի մանուֆակտուրաները: Նավաշինությունը: Գյուղատնտեսության աճումը: Խոտացանման և սերմնափոխության մուծումը: Անասնաբուծության բարելավումը:

Անտվերպենի և Ամստերդամի առևտրական շրջանառության աճը: Անտվերպենի և Ամստերդամի բորսան:

Էնգելսը բողոքականության տնտեսական դերի մասին:

Նիդերլանդական հեղափոխությունը, որպես վաղ բուրժուական հեղափոխություն: Հեղափոխության պատճառները: Նիդերլանդների էկոնոմիկան և հասարակակարգը հեղափոխությունից հետո:

Հոլանդական Արևելա-հնդկական առևտրական ընկերությունը: Հոլանդիայի գաղութային տիրապետությունները: Բնիկների ստրկացումը և ստրկավաճառությունը: Հոլանդիայի առևտրական գերիշխանությունը: Նախասկզբնական կուտակման պրոցեսը և մեթոդները: Պետական պարտքը և հարկերի աճը: Մարքսը Հոլանդիայի՝ որպես « XVII դարի օրինակելի



կապիտալիստական երկրի» մասին, ժողովրդական մասսաների դրության վատթարացումը մնացած Եվրոպայի համեմատությամբ:

Անգլիայի պայքարը Հոլանդիայի դեմ XVII դարում և Հոլանդիայի առևտրական հզորության անկումը XVIII դարում:

3. <u>Անգլիան XVI - XVIII դարերում.</u>

ա/ Անգլիայի ժողովրդական տնտեսությունը XVI - XVII դարերում: Վիլլանության վերջը XV դարում: Գյուղական բնակչության կատեգորիաները XVI - XVII դարերում: Հոմենները, Ջենտրի ազնվականությունը: Գյուղատնտեսական շուկայի աճը Տյուդորների ժամանակ: Տյուդորների տնտեսական քաղաքականությունը:

Մենորիալ տնտեսության քայքայումը: Գյուղացիության բռնի հողազրկման սկիզբը /«ցանկապատումները»/:

Ռեֆորմացիան և նրա ազդեցությունը ժողովրդական մասսաների բռնի էքսպրոպրիացիայի վրա:

Ֆեոդալական հողերի աշխարհականացումը/ գյուղացիական շարժումները: Կապիտալիստական ֆերմաների առաջացումը: «Արյունոտ օրենսդրությունը էքսպրոպրիացիայի ենթարկվածների դեմ»: Գյուղատնտեսության տեխնիկան: Սերմնափոխության սիստեմին անցնելը: Անասնաբուծության բարելավումը:

Անգլիայի արդյունաբերական զարգացումը: Գյուղատնտեսության մեջ կատարված փոփոխությունների դերը անգլիական արդյունաբերության համար: Բրդի արդյունաբերության զարգացումը և մահուդի արտահանման աճը, արդյունաբերության այլ ճյուղերի զարգ-

գացումը։ Ցեխերը։ Թյուդորների տնտեսական քաղաքականությունը։ Մանուֆակտուրան։ Բանվորության դեմ ուղղված դաժան օրենքները, ֆլամանդական էմիգրացիայի հովանավորելը։ Առևտրական ընկերությունները։ Մոսկովյան ընկերությունը։ Արևելահնդկական ընկերությունը։ Անգլիական գաղութները։ Լոնդոնի դերը երկրի էկոնոմիկայում։ Անգլիայի հարավ-արևելքի և հյուսիս-արևմուտքի միջև եղած տնտեսական տարբերությունները։

Անգլիական հումանիզմը և նրա ներկայացուցիչները։ Թոմաս Մորը և նրա «Ուտոպիան»։

բ/. Անգլիական հեղափոխությունը.

Սոցիալական հակասությունները գյուղում և քաղաքում և Կարլոս I-ի քաղաքականությունը։ Հեղափոխության պատճառները։ 1642-49 թ.թ. քաղաքացիական կռիվը։ Կրոմվելը, նրա դերը հեղափոխության տարբեր էտապներում, նրա տնտեսական քաղաքականությունը։

Հեղափոխության ագրարային օրենսդրությունը։ Արգելափակումները /enclosure/։ Կոպիհոլդերները /ֆրիհոլդերներ/։ Եպիսկոպոսական և թագավորական հողերի կոնֆիսկացիան և վաճառքը։ 1656 թ-ի ակտը ասպետական հողատիրության վերացման մասին։

Լևելլերների ագրարային քաղաքականությունը։ Դիգգերները։ Հեղափոխության շրջանի քաղաքականությունը արդյունաբերության և առևտրի ասպարեզում։ Կրոմվելի իռլանդական քաղաքականությունը։ Հեղափոխության մտցրած փոփոխությունները Անգլիայի սոցիալ-



տնտեսական կառուցվածքի մեջ։ «Փառավոր հեղափոխությունը» և պետական հողերի հափշտակումը։

գ. Անգլիայի տնտեսական զարգացումը XVII դարի վերջում և XVIII դարում.

Պարլամենտական ակտերը ցանկապատման մասին։ Գյուղացիության բռնի հողազրկման պրոցեսի ավարտումը XVIII դարում։ Կապիտալիստական ֆերմերության տարածվելը։ Գյուղատնտեսական տեխնիկայի հաջողությունները։

Արդյունաբերության կապիտալիստական ձևերի զարգացումը։ Բամբակեղենի արդյունաբերության ծագումը և նրա աճման չափերը տվյալ շրջանում։ Հուգենոտների ներգաղթի նշանակությունը անգլիական արդյունաբերության զարգացման համար։

Անգլիայի գաղութային տիրապետությունների աճը։ Նեգրերի վաճառքը։ Արևելա-հնդկական ընկերության գործունեությունը. Անգլիայի առևտրական գերիշխանությունը XVIII դարում։ Անգլիական բանկի հիմնադրումը։ Պետական բյուջեն և պետական պարտքը։ Անուղղակի վճարային [illegible]։

դ. Արդյունաբերական հեղաշրջման սկիզբը։

Արդյունաբերական հեղաշրջման նախադրյալները։ Աշխատանքի կազմակերպումը մանուֆակտուրայում։ Տեխնիկան մանուֆակտուրայի ներսում։ Մեքենաների ծագումը։ Մեքենաները մանածագործական արդյունաբերության մեջ։ Հարգրիվսի, Արկրայտի, Կրոմպտոնի, Կարտրայտի գյուտերը։ Չուգունի ձուլումը կոկսով և պող-

միջացում: Ուստաի ղեկավարները: Արհեստանոցից ... ար-տադրողականության բարձրացումը մեքենաների կիրառման շնորհիվ:

## Կ. Ֆրանսիան XVI – XVIII դարերում.

Սերվաժի աստիճանական կրճատումը: Գյուղացիության դրությունը հուգենոտական կռիվների ժամանակ. Գյուղացիական ապստամբությունները: Հենրի 4-րդի և Սյուլլիի ձեռնարկումները գյուղացիական հարցի վերաբերյալ.

Ֆրանսիական հումանիզմը և ռեֆորմացիոն շարժման կիրքը:

Գյուղացիության պարտավորությունները սենյորների հանդեպ:

Տիրածը և նրա տարածման չափը XVI դարում: Գյուղատնտեսական տեխնիկան. Գյուղացիության շեր-տավորումը. Վարձակալության ձևը: Ներքաշարությունը: Ֆրանսիայի արդյունաբերական զարգացումը XVI դարում:

Լիոնի մետաքսի արդյունաբերության զարգացումը: Կենտրոնացված մանուֆակտուրաները: Կոլբերի տնտեսա-կան քաղաքականությունը: Մանուֆակտուրան և տնայնա-գործությունը Ֆրանսիայում XVII դարում: Նանտի հրովար-տակի վերացումը և հուգենոտների արտագաղթը: Ֆրանսիայի արդյունաբերական անկումը XVII դարի վեր-ջում և XVIII դարում: Գաղութային քաղաքականությունը: 1763թ. փարիզյան դաշնագիրը: Ֆրանսիայի ֆինանսական հյուծվածությունը: Պետական պարտքը: Գյուղացիության վիճակը: Բորսայի սպեկուլյացիան Ջոն-Լո-ի գործառնու-թյունները:

Մերկանտիլիզմի ծննդավայրը: Ֆիզիոկրատները տնտեսա-



կան սիստեմը և նրա ծագումը: Լուսավորչականները և էնցիկլոպեդիստները, նրանց տնտեսա-գիտական հայացքները:

## Ե. Գերմանիան XVI – XVIII դարերում.

Արևմտյան և Արևելյան Գերմանիայի ագրարային կարգերի տարբերությունը: Գյուղացիության տնտեսական և իրավական վիճակի վատթարացումը XV դարի վերջում և XVI-ի սկզբում: Գերմանական հումանիզմը և նրա հո-սանքները: Ռեֆորմացիան Գերմանիայում: Լյութերը և լյութերականությունը: Թոմաս Մյունցերը և նրա սոցիա-լական ծրագիրը:

Գյուղացիական պատերազմը: Նրա հիմնական բայտ-ները: Տասներկու հոդվածները: Հեյլբրոնյան ծրագիրը: Քաղաքների դերը: Գյուղացիության պարտության պատ-ճառները: Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների կողմից գյուղացիական պատերազմի վերաբերյալ տրված գնա-հատականը. Արևմտյան Գերմանիայի գյուղացիության հետագա վիճակը գյուղացիական պատերազմից հետո:

Ճորտատիրության «երկրորդ հրատարակությունը» Արևելյան Գերմանիայում: Կոռային տնտեսության ձևը: Գյուղացիական հողերի հափշտակումները: Գեր-մանիայի արդյունաբերական պատմությունը XVI – XVIII դարերում: Հարավային Գերմանիայի և Հռենոսյան շրջանի քաղաքների ու Սաքսոնիայի արդյունաբերական զարգացումը XVI դարի առաջին կեսում: Երկրի տնտե-սական անկումը XVI դարի երկրորդ կեսում և դրա պատճառները:

Հարավային Գերմանիայի բանկիրները XVI դարում

...դերները, նրանց վարչային գործառնությունները, նրանց դերը միջազգային առևտրի բնագավառում: Քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունները: Երեսնամյա պատերազմը և նրա ազդեցությունը գերմանական եկոնոմիկայի վրա: Բրանդենբուրգի արդյունաբերական վերելքը XVII դարի վերջերից սկսած:

Գերմանիայի արդյունաբերական հետամնացությունը XVIII դարում՝ Անգլիայի և Ֆրանսիայի համեմատությամբ, դրա պատճառները:

6. Միջազգային առևտուրը և Արևմտյան Եվրոպայի կարևորագույն երկրների գաղութային նվաճումները XVI – XVIII դարերում:

ա). Պայքար ծովային ուղիների համար և արևմտա-եվրոպական պետությունների գաղութային քաղաքականությունը: Իսպանիայի, Պորտուգալիայի, Հոլանդիայի, Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային նվաճումները:

Հարավային և կենտրոնական Ամերիկայի գաղութային շահագործումը իսպանացիների և պորտուգալացիների և այդ շահագործման բնույթը: Գաղթօջախների կազմը: Տրոպիկական պլանտացիաների կազմակերպումը և բնիկների ճորտացումը: Նեգրերի ներմուծումը, ոսկու և արծաթի հանքերը Մեքսիկայում, Պերուում և Բրազիլիայում XVI – XVIII դարերում:

Պլանտացիոն տնտեսությունը Արևմտյան Հնդկաստանում և Բրազիլիայում: Արգենտինայի թույլ յուրացումը: Պորտուգալացիների ներթափանցումը Ինդոնեզիա և նրանց վտարումը հոլանդացիների կողմից: Ինդոնեզիայի գաղութային շահագործումը



հոլանդական Արևելա-հնդկական ընկերության կողմից: Արևելյան Ինդոնեզիայի սոցիալ-տնտեսական կարգը XVII դարում: Ինդոնեզիայի ֆեոդալական կազմակերպությունների օգտագործումը ընկերության կողմից գաղութի աշխատավորական մասսաների շահագործման համար: Հարկադրական մատակարարումները և կոնտինգենտները:

Նոր կուլտուրաների հարկադիր արմատացումը և տունկերի բանի վոչնչացումը եվրոպական շուկայում գները բարձրացնելու նպատակով:

Սուլթանների և գյուղացիների ապստամբությունները:

Ընկերության և առևտրական մոնոպոլիան:

Պորտուգալացիների ներթափանցումը Հնդկաստան և Հնդկաստանի հետ կատարվող առևտրի մոնոպոլիզացիան նրանց կողմից 16-րդ դարում:

Մեծ Մողոլների կայսրությունը:

Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը: Անգլո-ֆրանսիական պայքարը Հնդկաստանի համար:

Անգլիական Արևելա-Հնդկական ընկերության գործունեությունը և նրա ազդեցությունը Հնդկաստանի եկոնոմիկայի և հասարակական կարգի վրա:

Անգլիական և ֆրանսիական գաղութայունները Հյուսիսային Ամերիկայում: Անգլիական և ֆրանսիական կառավարությունների քաղաքականությունը գաղութավորների նկատմամբ:

բ/. Առևտուրը և առևտրական ճանապարհները XVI-XVIII դարերում: Առևտրական ճանապարհների և կենտրոնների տեղափոխումները: Միջազգային առևտրական

ճանապարհների փոխադրվելը Միջերկրական ծովից դեպի Ատլանտյան օվկիանոսը: Նոր առևտրական կենտրոնների աճումը: Հյուսիսային Իտալիայի քաղաքների առևտրական նշանակության անկումը: Տեղական նշանակություն ունեցող նոր առևտրական կենտրոնների առաջանալը Միջերկրական ծովի շրջանում:

Հարավ-գերմանական քաղաքների առևտրի անկումը: Համբուրգի և Ֆրանկֆուրտի Մայնի վրա դերի ուժեղացումը: Հանզայի անկումը և Անտվերպենի, Ամստերդամի, Հյուսիս-ֆրանսիական ու անգլիական նավահանգիստների առևտրական շրջանառությունների աճումը:

Այլ երկրների մասնակցությունը իսպանական գաղութների հետ կատարվող առևտրում: Սիստեմատիկ մաքսանենգությունն այդ առևտրում: Հոլանդիայի առևտրական գերիշխանությունը XVII դարում:

Հաղորդակցության ճանապարհների վիճակը: Փոստի առաջացումը: Ֆրանսիական և մանավանդ անգլիական առևտրի աճումը: Կրոմվելի նավագնացության ակտը:

Առևտրի կազմակերպումը: Առևտրական ընկերությունները:

Առևտրի աստիճանական անջատումը բանկիրական գործառնություններից, մեծաքանակ առևտրի զատվելը հատավաճառ առևտրից, մասնագիտացման զարգացումը առևտրի բնագավառում: Հաշվապահության զարգացումը: Տոնավաճառների դերի նվազումը առևտրի մեջ: Փերեկպաները և առևտուրը գյուղում: Առևտրական ընկերությունները: Անգլիական և



Հոլանդական Արևելա-Հնդկական ընկերությունների ծագումն և զարգացումը: Ապրանքների ասորտիմենտի ընդլայնումը առևտրի մեջ: Նեգրերի վաճառքը, նրա կազմակերպությունը և դերը նախասկզբնական կուտակման պրոցեսում:

Բորսայի ծագումը: Անտվերպենի բորսան XVI դարում: Բորսան Ամստերդամում, Լոնդոնում, Փարիզում: Բորսայի ուշ առաջացումը Գերմանիայում: Բորսայական գործառնությունների կազմակերպումը: Բորսային սպեկուլյացիան:

գ/. Դրամական շրջանառությունը և պետական ֆինանսները:

Ամերիկյան ոսկու և արծաթի ներհոսանքը: Ոսկու և արծաթի դրամի դերը դրամական շրջանառության մեջ: Դրամի կեղծումը: Խայտաբղետությունը դրամական շրջանառության մեջ: Ոսկու վալյուտային անցնելը Անգլիայում:

Գների հեղաշրջումն և նրա ազդեցությունը տնտեսական զարգացման վրա: Անգլիայի և Ֆրանսիայի պետական բյուջեի և պետական պարտքի պատմության հիմնական մոմենտները XVII – XVIII դարերում:

Պետական բյուջեն և պետական պարտքը, որպես նախասկզբնական կուտակման աղբյուրներ:

դ). Մերկանտիլիզմը, որպես նախասկզբնական կուտակման դարաշրջանի առևտրական և արդյունաբերական քաղաքականություն:

Մերկանտիլիզմի որպես տնտեսական քաղաքականության ընդհանուր բնութագիրը: Վաղ մերկանտիլիզմը

և վարդացած մերկանտիլիզմը:

Պետական իշխանության յեռանդուն միջամտությունը տնտեսական կյանքում: Մերկանտիլիստական քաղաքականությունն արդյունաբերության ասպարեզում: Արդյունաբերականներին տրվող պրեմիաները և նպաստները մոնոպոլիստների շնորհումը, արտադրության կարգավորումը, վերաբերմունքը բանվորության հանդեպ:

Կոլբերի /Ֆրանսիայում/ վարած տնտեսական քաղաքականության բնութագիրը:

Կրոմվելի մերկանտիլիզմը:

Մերկանտիլիզմի ճգնաժամը: Քենեն և ֆիզիոկրատները:

ե/. Կապիտալիզմի ծագման վերաբերող հակամարքսիստական տեսությունների քննադատությունը:

Զոմբարտի հայացքների քննադատությունը:

Բոգդանովի «առևտրական կապիտալիզմի» տեսության քննադատությունը:

## ՆՈՐ ԴԱՐ

Հատված 1-ին. Առաջավոր յերկրներում կապիտալիզմի տարած հաղթանակի և ամրացման եպոխան /ֆրանսիական բուրժուական հեղափոխությունից մինչև փարիզյան կոմմունան/:

1. 1789թ. բուրժուական հեղափոխությունը Ֆրանսիայում և համաշխարհային պատմության նոր եպոխայի սկիզբը:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր պատմության պերիոդիզացիան: Նրա յերեք ժամանակաշրջանների բնորոշ գծերը:



ա/. Անգլիայում կատարված արդյունաբերական հեղաշրջման հետևանքները:

Անգլիական արդյունաբերական հեղաշրջման էության և հետևանքների մասին: Խոշոր արդյունաբերության ստեղծումը և պրոլետարիատի առաջացումը, ինքնուրույն պրոլետարական շարժման ծագումը, Անգլիայի արդյունաբերական աշխարհագրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները:

Արդյունաբերական հեղաշրջումն և աշխատավորության տնտեսական դրությունը: Արդյունաբերական հեղաշրջումը մյուս յերկրներում:

բ/. Ամերիկական հեղափոխությունը:

Հյուսիսային Ամերիկայի գաղութացման պրոցեսը և նրա հետևանքները: Ֆեոդալիզմն արմատավորելու փորձերը: Արդյունաբերության աճը: Անգլիայի քաղաքականությունը գաղութականների հանդեպ: Հյուսիս-Ամերիկյան գաղութների ապստամբությունն և ԱՄՆ-ի կազմակերպումը: Հեղափոխության ազդեցությունը ԱՄՆ-ի տնտեսական զարգացման վրա: Ամերիկական հեղափոխության պատմական նշանակությունը:

գ/. Ֆրանսիայի տնտեսական կարգը հեղափոխության նախօրյակին: Ֆեոդալական աբսոլյուտիստական սիստեմի ճգնաժամը: Գյուղատնտեսության գերակշռությունը յերկրի էկոնոմիկայում:

Հողային սեփականության բաշխվածքը: Ֆեոդալական և աշխարհիկ խոշոր հողատիրությունը; հողազուրկ գյուղացիները: Գյուղացիության շերտավորումը: Համայնական հողերը, սենյորական ռեժիմը: Մանր արդ-

տիրության գերակշռումը, կիսարարությունը որպես շահագործման հիմնական միջոց: Խոշոր կալվածքներում գյուղատնտեսության տեխնիկական մակարդակը: Հարկերը: Գյուղացիության աղքատացումը հեղափոխության նախօրեին:

Կապիտալիստական մանուֆակտուրան և նրա դերը նախահեղափոխական Ֆրանսիայի արդյունաբերության մեջ:

Ներքին շուկայի նեղ լինելը: Ներքին մաքսատները: Արտադրողական ուժերի աճման և արտադրական հարաբերությունների միջև առաջացած հակասությունը նախահեղափոխական Ֆրանսիայում: Ռեֆորմներ անցկացնելու փորձերը: Տյուրգո: Նեկկեր: Դժգոհության ուժեղացումը և ճգնաժամի սրվելը:

## 1. Բուրժուական հեղափոխությունը Ֆրանսիայում.

Իշխանության գլուխ անցած խոշոր բուրժուազիան և նրա սոցիալ-տնտեսական քաղաքականությունը:

Հիմնադիր և օրենսդիր ժողովների ձեռնարկումները ագրարային հարցի գծով: Եկեղեցական հողերի կոնֆիսկացիան և ազգային գույքերը ծախծխելու սիստեմը: Ֆինանսական քաղաքականությունը: Լե-Շապելյեի օրենքը և բանվորական քաղաքականությունը: Հեղափոխական Ֆրանսիայի պատերազմների սկիզբը ֆեոդալական Եվրոպայի դեմ:

1792 թ. Օգոստոսի 10-ի հեղափոխությունը: Պայքարը Ժիրոնդիստների և յակոբինների միջև: Բանվորության աճումը և նրա պահանջները: Ինֆլյացիան և նրա ազդեցությունը: Մաքսիմումի և պարտադիր փոխառության հարցը:



Յակոբինյան դիկտատուրան, նրա սոցիալական բազան և նրա ձեռնարկումները ագրարային հարցի գծով, պարենավորման վերաբերյալ օրենքները, բանվորների հանդեպ վարած քաղաքականությունը:

Թերմիդորյան ռեակցիան և թերմիդորական կոնվենտի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Մասսաների դրության վատթարացումը:

Բրյումերի 18-ի հեղաշրջումը: Նապոլեոնի սոցիալական հենարանը և նրա սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Նապոլեոնի քաղաքացիական օրենսգիրքը:

Ֆրանսիայի պայքարը Անգլիայի դեմ Նապոլեոնի ժամանակ՝ Անգլիական արդյունաբերական հեգեմոնիայից ազատվելու համար: Կոնտինենտալ բլոկադան և Ֆրանսիայի ու Եվրոպական այլ երկրների արդյունաբերականների դիրքը նրա հանդեպ:

Բլոկադայի արդյունքները անգլիական և կոնտինենտալ արդյունաբերության համար: Հեղափոխության նշանակությունը Ֆրանսիայի համար և նրա համաշխարհային նշանակությունը:

## 2. Անգլիան, որպես «աշխարհի արհեստանոց» և առաջատար արդյունաբերական պետություն.

Ներածություն.- Անգլիայի քաղաքական և տնտեսական պատմության ուղիները մինչև 19-րդ դարի 70-ական թվականները:

ա/ Անգլիական արդյունաբերության աճումը:

Արդյունաբերական հեղաշրջման ավարտումը: Տեխնիկայի

հետագա զարգացումը: Տեխնիկական կատարելագործումները բամբակեղենի արդյունաբերության մեջ: Նոր գյուտերը մետաղագործության մեջ, տաք փուքսի մուծումը Նեյլսոնի կողմից Նեսմիթի շոգ ու մուրճը, Կաուպերի ապարատը:

Բեսսեմերի կոնվերտորը: Մեքենաշինության զարգացումը, մեքենաշինական տեխնիկան: Երկաթուղիների առաջացումը: Ստեֆենսոնը և նրա գործունեությունը: Երկաթուղային շինարարության զարգացումը և նրա դերը արդյունաբերության համար:

Աշխատանքի արտադրողականության աճը և արտադրության էժանացումը:

1825, 1836, 1847, 1857, 1866 թվականների պարբերական ճգնաժամը և նրանց ազդեցությունը Անգլիայի տնտեսական զարգացման վրա:

Բ/. Անգլիան, որպես աշխարհի արհեստանոց: Անգլիան, որպես «աշխարհի արհեստանոց» նրա տեսակարար կշիռը քարածխի, մետաղի, մանածագործվածքի համաշխարհային արտադրության մեջ: Արդյունաբերական ապրանքների արտահանման զարգացումը և նրա դերը արտադրության համար: Անհամարժեքային փոխանակությունը հետամնաց երկրների հետ և նրանց շահագործումը: Կապիտալի արտահանումը: Քաղաքային բնակչության աճը:

Գ/. Հացահատիկի մաքսերի վերացումը և առևտրի ազատության հաղթանակը:

Անգլիայի գյուղատնտեսությունը XIX-դարի առաջին կեսում: Հացի գները և լենդլորդների եկամուտները: Հացի մաքսերի վերացումը և ազատ առևտրի հաղթանակը: Նավագնացության ակտի վերացումը: Ազատ առևտրի



զարգացման ուղղությամբ կատարված տեղաշարժերը Եվրոպայի մյուս երկրներում և վաճառահանման շուկաների լայնացումն անգլիական արդյունաբերության համար:

Հիսունական և վաթսունական թվականները, որպես բրիտանական կապիտալիզմի «ծաղկման» տարիներ:

Հումքի և պարենի ներմուծման աճը: Գյուղատնտեսության վերակառուցման սկիզբը անասնաբուծության ուղղությամբ:

Անգլիայի առևտրական նավատորմի զարգացումը: Անգլիայի տարանցիկ առևտուրը: Վերաարտահանման դերը անգլիական արտահանման գործում: Միջազգային քաղաքականությունը: Պալմերստոնը: Դիզրայելին:

Դ/. Լոնդոնը, որպես համաշխարհային ֆինանսական կենտրոն:

Անգլիական բանկային սիստեմի ձևավորման հիմնական մոմենտները: Վարկի կազմակերպումը և եմիսիոն ու դեպոզիտային գործառնությունների զարգացումը մինչև Պիլի բանկային ակտը: Պիլի բանկային ակտը և նրա նշանակությունը անգլիական բանկային սիստեմի հետագա զարգացման համար:

Լոնդոնը ձեռք է բերում համաշխարհային ֆինանսական կենտրոնի նշանակություն:

Ե/. Անգլիայի գաղութային տիրապետությունների աճումը և նրանց դերը անգլիական կապիտալիզմի զարգացման գործում:

Գաղութային տիրապետությունների աճը: Գաղու-

բայրի քաղաքականությունը: Ափիոնի պատերազմը Չինաստանի դեմ և անիրավահավասար պայմանագրերը: Գաղութների դերը բրիտանական կապիտալիզմի զարգացման գործում:

Իռլանդիայի շահագործումը և ճնշումը անգլիական լենդլորդերի և անգլիական կառավարության կողմից: 1846թ. սովը: Իռլանդիայի ազգաբնակչության նվազումը սովի և մասսայաբար Ամերիկա գաղթելու հետևանքով: Ագրարային շարժումը: Ֆենիները:

Վ/ Բանվոր դասակարգի դրությունը: Չարտիզմը: Տրեդյունիոնիզմի սկզբնավորումը: Բանվոր դասակարգի վիճակը XIX դարի առաջին կեսում, Էնգելսի հետազոտության տվյալների համաձայն: Արհեստների կործանումը և մանր բուրժուազիայի պրոլետարացումը: Կապիտալի պահեստի բանակը: Մասսայական գործազրկությունը: Բանվորների կենսական մակարդակի իջեցումը: Պաուպերիզմի աճումը: 1834թ. օրենքը աղքատների մասին: Չարտիզմը: Նրա զարգացման գլխավոր էտապները: 1848թ. հեղափոխության ազդեցությունը: Չարտիզմի սոցիալ-տնտեսական ծրագիրը: Չարտիզմը, որպես «առաջին լայն, իսկապես մասսայական, քաղաքականորեն ձևավորված պրոլետարական հեղափոխական շարժում» /Լենին, երկ. ժող. հ. 24 էջ 249/:

Բանվորական արիստոկրատիայի առաջացումը XIX դարի յերկրորդ կեսում:

Տրեդյունիոնիզմը և օպորտյունիզմի արմատները Անգլիայի բանվորական շարժման մեջ:

Է/ Անգլիայի կապիտալիստական իրականությունը, որպես նյութ Մարքսի համար «Կապիտալ»-ի վրա աշխատելու ընթացքում:



## 3. ՖՐԱՆՍԻԱ

Ներածություն.- Ֆրանսիայի քաղաքական և տնտեսական պատմության նշանաձողերը մինչև 70-ական թվականները:

ա/ Արդյունաբերության զարգացումն և բանվորական շարժումը:

XIX դարի առաջին կեսում Ֆրանսիան, որպես Յեվրոպայի յերկրորդ յերկիրը, իր տնտեսական զարգացման մակարդակի տեսակետից: Արդյունաբերական հեղաշրջումը Ֆրանսիայում: Տեխնիկական գյուտերը Ֆրանսիայում, Ժակկարդի դազգյահը, Ջերրոյի կրատից մեքենան /պերրոտինան/ Ժիրարդի վուշ մանող մեքենան: Ֆրանսիական գյուտերի օգտագործումը բրիտանական տեքստիլ արդյունաբերության մեջ:

Մետաղը կոքսով յուղելու սկիզբը, Մարտինյան վառարանը 1864թ. և նրա նշանակությունը համաշխարհային մետալուրգիայի համար:

Խոշոր արդյունաբերության առաջացումը: Արդյունաբերական վերելքը 50 և 60-ական թվականներում: Մանուֆակտուրայի, կապիտալիստական տնային արդյունաբերության և արհեստի զգալի տեսակարար կշիռը, հատկապես Փարիզում: Ֆրանսիական արդյունաբերության ճյուղային կառուցվածքը անգլիականի համեմատությամբ: Յերկաթուղային շինարարությունը և նրա դերը յերկրի էկոնոմիկայում:

1847, 1857, 1867 թվականների ճգնաժամերը և նրանց ազդեցությունը Ֆրանսիայի էկոնոմիկայի վրա: Պրոլետարիատի ձևավորվելը և նրա տնտեսական դրությունը:

Ինքնուրույն պրոլետարական շարժման սկիզբը Ֆրանսիայում: Լիոնի ապստամբությունները: Պրոլետարիատը 1848թ. հեղափոխության ժամանակ: Լուի Բլանը, Բլանկին: 1848թ. ազգային արհեստանոցները:

Մարքսիզմի զարգացման սկիզբը Ֆրանսիայում 1-ին ինտերնացիոնալի սեկցիաները և նրանց գործունեությունը:

բ/. Գյուղատնտեսության զարգացումը: Գյուղատնտեսության դերակշռումը Ֆրանսիայի եկոնոմիկայում XIX դարի առաջին կեսում: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղատնտեսության մեջ: Գյուղացիության շերտավորումը: Պարտքերի աճը և վաշխառության դերը: Գյուղատնտեսական տեխնիկայի դանդաղ առաջադիմումը, բերքատվության ավելացումը, շաքարի ճակնդեղի արմատացումը Ֆրանսիայի հյուսիսում:

Գյուղացիությունը 1848թ. հեղափոխության ընթացքում:

գ/. 1848թ. հեղափոխությունը, նրա պատճառներն և հետևանքները:

դ/. Վարկը.

Ֆրանսիական բանկի հիմնադրումը: Բանկիրական տները XIX-դարի առաջին կեսում: Ռոտշիլդի դերը: 1848թ. հեղափոխությունը և Ֆրանսիայի վարկային սիստեմը:

Բանկերի ուժեղ աճումը յերկրորդ կայսրության տարիներին:

Պերյերա յեղբայրների «Շարժական փայի բանկը», նրա դերը Ֆրանսիայի յերկաթուղային շինարարության մեջ և տնտեսական կյանքում:

Հիսունական և վաթսունական թվականների Փարիզը,



վորպես ոտարյերկրյա և պետական յերկաթուղային փոխառությունների բաշխման շուկա: Փարիզի բորսայի դերը:-

ե/. Ֆրանսիայի գաղութային հափշտակումները:

Ալժիրի նվաճումը: Ալժիրի եկոնոմիկան և հասարակակարգը նրա նվաճման նախօրյակին: Բնիկների հողերի մասսայական հափշտակումը և Ալժիրի ֆրանսիական գաղութացումը: Հնդկաչինի նվաճման սկիզբը, Հնդկաչինի եկոնոմիկան և հասարակակարգը:

Գաղութների դերը ֆրանսիական կապիտալիզմի զարգացման համար: Ֆրանսիայի արտաքին առևտուրը:

## Կ. ԳԵՐՄԱՆԻԱ

Ներածություն.- XIX դարի I-ին կեսի Գերմանիայի տնտեսական հետամնացության պատճառները: Գերմանիայի տնտեսական և քաղաքական պատմության ուղիները մինչև 70-ական թվականները:

ա/. Գերմանիայի արդյունաբերական զարգացումը մինչև ֆրանկո պրուսական պատերազմը:

Արհեստի և կապիտալիստական մանուֆակտուրայի դերակշռումը արդյունաբերական արտադրության մեջ XIX դարի առաջին կեսում: Այդ գործոնի ազդեցությունը 1848թ. հեղափոխության ընթացքի վրա:

Մաքսային Միությունը և խոշոր արդյունաբերության սկզբնավորումը: Տնտեսական և քաղաքական միավորման ազդեցությունը տնտեսական զարգացման տեմպերի վրա:

Գերմանիայի ինդուստրացումը հիսունական և վաթսունական թվականներին գերմանական արդյունա-

բերական տեխնիկան քննարկվող շրջանում: Հաջողությունները քիմիայի բնագավառում: Քարածխի թորման /պերեգոնկա/ արդյունքներից անիլինի ներկեր ստանալը Թունգեյի կողմից: Յերկաթուղային շինարարությունը:

1847, 1857, 1866 թվականների ճգնաժամերը և նրանց ազդեցությունը Գերմանիայի էկոնոմիկայի վրա:

Բանվոր դասակարգի դրությունը և բանվորական շարժման զարգացումը: Մարքսը և Էնգելսը: Բանվոր դասակարգը 1848թ. հեղափոխության ընթացքում:

Բ/ Գյուղատնտեսության զարգացումը:

Յերկրի գյուղատնտեսական բնույթը, տվյալ դարի առաջին կեսում: Հացի արտահանումը:

Գյուղատնտեսության ազատագրման ընթացքը: Յերկրի տարբեր մասերի միջև յեղած զանազանությունը այդ տեսակետից:

1848թ. հեղափոխության դերը Գերմանիայում ֆեոդալական հարաբերությունները վերացնելու գործում:

Գյուղացիների հողազրկումը, որպես գյուղացիության ազատագրման բնորոշ գիծը: Գյուղատնտեսության զարգացման պրուսական ուղին:

Պրուսական յունկերը սկսում է ֆեոդալից վերածվել գյուղատնտեսական ձեռնարկատիրոջ:

Գյուղատնտեսական տեխնիկայի հաջողությունները:

Բազմադաշտության և սերմափոխության տարածվելը:

Շաքարի, ճակնդեղի արմատացման սկիզբը: Բերքատվության բարձրացումը: Լիբիխի գործունեությունը:

Գ/ 1848թ. հեղափոխությունը, նրա պատճառներն և հետևանքները:



5. Ամերիկայի Միացյալ Նահանգները.

Ներածություն.-

ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական պատմության ուղենիշները մինչև 70-ական թվականները:

ա/ Տերրիտորիայի աճումը և բնակչության շարժումը դեպի Արևմուտք:

ԱՄՆ-ի տերրիտորիան 1783թ.: Հետագայում ձեռք բերած շրջանները:

Գաղութացման ընթացքը: Յեվրոպայից կատարված արտագաղթը, նրա դինամիկան և գաղթողների կազմը: Տերրիտորիայի յուրացումը: Շարժումը դեպի Արևմուտք: Հնդկայիններին հետ մղելն ու բնաջնջելը: Հասարակական հողերի ֆոնդի ստեղծումը: Նրանց բաշխման յեղանակները: Գոմստեդների մասին ակտը:

բ/ Գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացումը:

Ստրկական աշխատանքի վրա հիմնված պլանտացիոն տնտեսությունը հարավում: Բամբակի արտադրության գծով նրա մասնագիտացումը հեղափոխությունից հետո՝ անգլիական շուկայի պահանջարկի ազդեցության տակ: Բամբակազտիչ մեքենայի հնարումը Ուայտնեյի կողմից, բամբակի դերն ամերիկական արտահանման և հարավի ու հյուսիսի ժողովրդական տնտեսության մեջ:

Հարավի գյուղատնտեսական այլ կուլտուրաները:

Հյուսիսի ֆերմերական տնտեսությունը: Հիմնական կուլտուրաները: Գյուղատնտեսության մեքենայացման

սկիզբը Հյուսիսում։ Ջոն-Դիրի և Մակ. Կորմիկի գյուտերը։

Հյուսիսի արդյունաբերական զարգացումը։ Արդյունաբերական հեղաշրջումը ԱՄՆ-ում։ Ամերիկական տեխնիկական գյուտերը։ Աշխատանքի պայմաններն ամերիկական արդյունաբերության մեջ։ Պրոտեկցիոնիզմը։ Արդյունաբերության կարևորագույն ճյուղերի աճումն և նրանց աշխարհագրական տեղաբաշխումը։

1837, 1847, 1857, 1875 թվականների ճգնաժամերը և նրանց ազդեցությունը ԱՄՆ-ի էկոնոմիկայի վրա։

դ/ Տրանսպորտ և նրա դերը հյուսիս-ամերիկյան տնտեսության զարգացման գործում։

Ներքին նավագնացության զարգացումը գետերի և լճերի վրա։ Ջրանցքների կառուցման դարաշրջանը։

Ծովային տրանսպորտի ծաղկումը և նրա անկումը քաղաքացիական կռվից հետո։ Յերկաթուղիների կառուցումը։ Նրա չափերը յեվրոպական պետությունների, նույն տարիներում կատարված յերկաթուղային շինարարության համեմատությամբ։

Առաջին յերկաթգծերի ուղղությունը։ Յերկաթուղային շինարարության ֆինանսավորման աղբյուրները։

Տրանսպորտի դերը ԱՄՆ-ի տնտեսական զարգացման գործում։

ե/ Վարկը

Բանկերի զարգացումը ԱՄՆ-ում 1863-1865թթ օրենքները։ Ազգային բանկերի մասին։

զ/ Արտաքին առևտուրը և կապիտալների ներմուծումը։



ԱՄՆ-ի արտաքին առևտուրը։ Արտահանման և ներմուծման կազմը։ Յեվրոպայի և մանավորապես Անգլիայի դերը ԱՄՆ-ի արտաքին առևտրում։ Առևտուրն Արևա-Յեվրոպական յերկրների հետ։

Ասիայի հետ ունեցած տնտեսական կապերն քառասնական և հիսունական թվականների այդ ուղղությամբ կատարած փոփոխությունները քաղաքացիական պատերազմից հետո։

Առևտրական բալանսի պասսիվությունն և նրա ծածկելուն ծառայող աղբյուրները։ Կապիտալիստների ներմուծումը Յեվրոպայից։

զ/ Քաղաքացիական կռիվն ԱՄՆ-ում, նրա պատճառներն և հետևանքները։

է/ ԱՄՆ-ի տնտեսական զարգացման արագ տեմպերի պատճառները։

Ֆեոդալիզմի էլեմենտների աննշան և անհարատև լինելը։ Ազատ հողերի առատությունը և բացարձակ ռենտայի բացակայումը, բանվորական ուժի պակասը և դրանից առաջացած համեմատաբար բարձր աշխատավարձն ու տեխնիկական արագ պրոգրեսը։ Անգլիական տեխնիկայի նվաճումների օգտագործումը։ Ներքին շուկայի զգալի տարողությունը, հարկային բեռի համեմատաբար ցածր մակարդակը։

Վերնաշենքերի և աշխարհագրական միջավայրի դերը ԱՄՆ-ի տնտեսական զարգացման գործում։

Ամերիկյան բուրժուական փիլիսոփաների տեսությունները ԱՄՆ-ի տնտեսական զարգացման արագ տեմպերի պատճառների մասին և նրանց քննադատությունը։

## 6. Բրիտանական Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիան.

Հնդկաստան: Հնդկաստանի անգլիական նվաճման հիմնական էտապները: Անգլո-հնդկական ընկերության դերը և քաղաքականությունը: Մշտական զեմինդարության վերաբերյալ օրենքը և ագրարային հարաբերությունները XVIII դարի վերջում: Հնդկաստանի թալանումը նախասկզբնական կուտակման մեթոդներով: Բրիտանական բամբակե գործվածքների ներմուծումը, հնդկական ջուլհակների քայքայվելը և բնաջնջվելը: Ոռոգման հին կառույցների անկումը, սովի սաստկացումը: Ափիոնի բուծումը Չինաստան ներմուծելու համար:

XIX դարի հիսունական թվականներին:

Մարքսն այն արդյունքների մասին, որ ունեցել է Անգլո-հնդկական ընկերության տիրապետությունը Հնդկաստանում: Հնդկաստանի հանդեպ վարած բրիտանական քաղաքականության մեջ ծագած փոփոխությունները հիսունական թվականներին:

Բրիտանական կապիտալի կողմից սկսված յերկաթուղային շինարարության սկիզբը: Յերկաթուղային շինարարության ազդեցությունը յերկրի էկոնոմիկայի վրա: Յեվրոպական տիպի վերամշակման կառույցների սկիզբը և դրանց շահագործելու առևտրական հիմունքներով: Անգլո-հնդկական կառավարության փոփոխությունները Անգլիայից:

Զորքերի ապստամբությունը: Բնակչության ապստամբությունը: Սոփ: Համաձայնագրերը բեկի և այլ կուլտու-



րաների բրիտանական պլանտացիաների վարդացումը: Քարածուխի հանույթը, յերկաթուղու առաջացրած պահանջի կապակցությամբ:

Բամբակեղենի և ջութի առաջին գործարանների հիմնումը: Տեղական արդյունաբերական բուրժուազիայի դանդաղ կազմավորման սկիզբը:

Պրոլետարիատի գաղութային շահագործումը:

Չինաստան.- Գյուղացիական պատերազմը XVIII դարում և նրա ազդեցությունը ագրարային հարաբերությունների վրա: Արտաքին առևտրի վարդացումը XVIII դարում: Հանքագործության և արհեստի աճը: Գիլդերը և համքարությունները: Տնայնագործությունը: Մանուֆակտուրաները: Ձեռագործական բարձր տեխնիկան: Նուրբ մետաքս, բեռնակիր անասուններ, սայլակն և նավակը՝ որպես տրանսպորտի հիմնական միջոցներ: Գյուղացիության հողազրկման պրոցեսը XVIII դարի յերկրորդ կեսում: Յեվրոպացիների տնտեսական ներխուժումը:

Ափիոնի պատերազմը և նրա հետեվանքները: Անիրավահավասար պայմանագրերը:

Տայպինյան ապստամբությունը, նրա պատճառները, բնույթը, էտապները:

Տայպինյան ապստամբության պարտության ազդեցությունը Չինաստանի հետագա պատմության վրա: Մեծ պետությունների տնտեսական և ռազմա-քաղաքական ծավալվող ներթափանցումը Չինաստան:

Գյուղացիների, արհեստավորների, կուլիների դրության վատթարացումը: Կոմպրադորությունը:

Ճապոնիան.- Ֆեոդալիզմի քայքայումը տոկուգա-

վայի դարաշրջանի յերկրորդ կիսում: Գյուղացիության ֆեոդալական ճնշման և շահագործման ուժեղացումը: Գյուղացիության յելույթների ու ապստամբությունների հարաճուն ալիքը: Ապա դասակարգայնացած սամուրայների և չքավորության քաղաքային բունտերը: Առևտրական և արդյունաբերական բուրժուազիայի աճը: Շերտավորումը ֆեոդալների շարքում: Ճապոնիայի «բացվելը» կապիտալիստական աշխարհի հետ հաղորդակցվելու համար: Անիրավահավասար պայմանագրերը: Մեծ պետությունների փորձերը Ճապոնիան գաղութ դարձնելու: Արտաքին վտանգի դերը հեղաշրջման արագացման և ֆեոդալների շերտավորման գործում «Մեյձիի հեղափոխությունը» գյուղատնտեսությունը, վորպես հեղափոխության հիմնական շարժիչ ուժը: Բուրժուա-կալվածատիրական բլոկի ձևավորումը և գյուղացիական ապստամբությունների ճնշումը նրա կողմից: 1868թ. բուրժուական հեղափոխության կիսատ, անավարտ բնույթը: Ճապոնիայի ինքնուրույնությունը պահպանելուն աջակցող միջազգային պայմաններն այդ շրջանում; սիփայների ապստամբությունը տայպինյան ապստամբությունը, քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում և այլն:

## 7. Առաջավոր յերկրներում հաստատված կապիտալիզմի հաղթանակի դարաշրջանի սոցիալ-տնտեսական արդյունքները:

ա/ Ֆեոդալական շահագործման փոխարինվելը կապիտալիստականով:

Հասարակության բուրժուական վերնախավի հարաճուն հարստացումը և ժողովրդական մասսաների աղքատացումը:



Պրոլետարիատի դրությունը: Շահագործման պայմանների դինամիկան XVIII դարի վերջերքից սկսած մինչև XIX դարի 70-ական թվականները /աշխատավարձը, բանվորական օրը, կանանց և յերեխաների աշխատանքը, աշխատանքի վարձատրությունը, սանիտարական պայմանները, գործազրկությունը, մահացությունը/: Տարբեր յերկրների պրոլետարիատի միջակի տարբերությունները և նրանց պատճառները: Գործադուլային պայքարը: Կապիտալիստական տնտեսության անարխիան և 1847, 1857, 1867 թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամերը:

Այդ ճգնաժամերի ազդեցությունը պրոլետարիատի դրության վրա:

Գյուղացիության տնտեսական դրությունը:

բ/ Նոր տեխնիկական բազան և աշխատանքի արտադրողականության աճը: Ֆեոդալական եպոխայի հատուկ ձեռքով գործադրվող տեխնիկայի փոխարինվելը գիտության վրա հենված մեքենայական տեխնիկայով: Տեխնիկական ինտելիգենցիայի առաջացումը, նրա վերնախավի սերտ աճումը; կապիտալիստական դասակարգի հետ:

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը արդյունաբերության մեջ: Նոր տեխնիկայի և աշխատանքի նոր կազմակերպման հիման վրա իբրև օրինակ կարող է ծառայել բամբակեղենի արդյունաբերությունն և մետալուրգիան: Աշխատանքի արտադրողականության բարձրացման արդյունքների յուրացումը շահագործողների դասակարգի կողմից:

գ/ Արդյունաբերության հիմնական ճյուղերի գյուղատնտեսության և տրանսպորտի զարգացումը: Այդ զար-

զարգացման անհամաչափությունը:

Համաշխարհային արդյունաբերության հիմնական ճյուղերի աճումը: Խոշոր տեքստիլ արդյունաբերության զարգացումը, վուշի վանումը բամբակի կողմից և մանածագործական նոր ճյուղի այն է՝ գաղութային հումքի հիման վրա աշխատող բամբակեղենի արդյունաբերության ստեղծումը կապիտալիստական յերկրներում:

Ծանր ինդուստրիայի ստեղծումը: Մետաղի ձուլվածքի և քարածուխի հանույթի զգալի ավելացումը, նավթի հանույթի սկիզբը:

Ծանր արդյունաբերության նոր ճյուղի մեքենաշինության առաջացումը: Քիմիական արդյունաբերության ծավալումը: Հին նյութերի փոխարինումը նորով /փայտը մետաղով և այլն/:

Համաշխարհային տրանսպորտի զարգացումը: Շոգենավի հնարումը Ֆուլտոնի կողմից: Շոգենավատորմն աստիճանաբար դուրս է մղում առագաստային նավատորմիղը: Այդ պրոցեսի դանդաղության պատճառները: Սուեզի ջրանցքի փորումը:

Համաշխարհային յերկաթուղային ցանցի զարգացումը: Յերկաթուղիների կառուցումը հետամնաց յերկրներում և գաղութներում: Տրանսպորտի դերը ծանր ինդուստրիայի զարգացման, ագրարային յերկրների բնատնտեսության քայքայման, բուրժուական մետրոպոլիայի կողմից գաղութները շահագործելու գործում:

Համաշխարհային գյուղատնտեսության դինամիկան: Գյուղատնտեսական մթերքներ արտադրող և սպառող յերկրների զատվելն իրարից: Պլանտացիոն կուլտուրաների



զարգացումը գաղութային յերկրներում համաշխարհային շուկայի առաջադրած պահանջների ազդեցության տակ:

Շաքարի ճակնդեղի ցանքի տարածվելը Յեվրոպայում:

Անասնապահական ռայոնները Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Հարավային Ամերիկայում և ԱՄՆ-ի Արևմուտքում:

Առանձին յերկրների, ռայոնների, ճյուղերի զարգացման տեմպերի տարբերությունները կապիտալիզմի անհամաչափ զարգացման կապակցությամբ:

Դ/ Համաշխարհային արտադրության և համաշխարհային բնակչության տեղաբաշխման մեջ առաջացած աշխարհագրական տեղաշարժերը:

Նոր աշխարհի տեսակարար կշռի բարձրացումը համաշխարհային յերկրագործության և անասնապահության բնագավառում: Մյուս պետությունների բաժինների փոփոխությունները: Կապիտալիզմի անհամաչափ զարգացման օրենքի ազդեցությունը:

Միացյալ նահանգների բաժնի աճը համաշխարհային արդյունաբերության մեջ: Յեվրոպայից դուրս ինդուստրիայի զարգացումը:

Արտագաղթի գլխավոր կենտրոնները: Ներգաղթի յերկրները: Յեվրոպայի և Ամերիկայի բնակչության աճումը: Առանձին յերկրների բնակչության աճման մեջ յեղած տարբերությունները: Ծնելությունը, մահացությունը և բնակչության ավելացումն ըստ դասակարգային խմբերի: Յերկրագնդի ազգաբնակչության տեղաբաշխման փոփոխությունները XIX դարի սկզբից սկսած ազգաբնակչության զգալի աճումը Արևմտյան Յեվրոպայի և ԱՄ

քաղաքներում: Քաղաքային բնակչության սոցիալական կազմը: Պաուպերիզմը:

ե/ Համաշխարհային առևտրի և միջազգային վարկի զարգացումը: Գների շարժումը և դրամական շրջանառության վիճակը:

Համաշխարհային առևտրի աճը; նրա ուղիները: Միջազգային առևտրի շրջանառության մեջ յեղած ապրանքների կազմի փոփոխումը:

Կարեվորագույն յերկրների տեսակարար կշռի փոփոխությունը համաշխարհային առևտրի ասպարեզում:

Համաշխարհային ֆինանսական կենտրոնները: Համաշխարհային առևտրի և յերկաթուղային շինարարության ֆինանսավորումը: Կապիտալի արտահանումը, նրա ուղղությունն և դերը: Պետական պարտքի աճը կարեվորագույն յերկրներում:

Թանգարժեք մետաղների հանույթի դինամիկան: Վոսկու դյուտը Կալիֆորնիայում և Ավստրալիայում:

Գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գների շարժումը: Գյուղատնտեսական ապրանքների գների անկումը 20-ական և 30-ական թվականներին և նրա ազդեցությունը ագրարային յերկրների տնտեսության վրա:

զ/ Գաղութների և հետամնաց պետությունների աշխատավորական մասսաների սաստկացող շահագործումն առաջավոր յերկրների բուրժուազիայի կողմից:

Աշխատանքի մեծ մասի տնտեսական և քաղաքական հափշտակումը Յեվրոպական պետությունների կողմից ամրապնդվում է:



Գաղութների բացարձակ թալանումը, հողերի և այլ բնական հարստությունների հափշտակման հարկային լծի և տեղացիների հարկադիր աշխատանքի արդյունքների սեփականացման միջոցով:

Գաղութների և հետամնաց յերկրների հետ կատարվող անհամարժեքային փոխանակության միջոցով առաջավոր յերկրների բուրժուազիայի կողմից ստացվող շահույթը:

Հետամնաց յերկրները վեր են ածվում առաջավոր յերկրների արդյունաբերության համար հումք մատակարարող և պատրաստի ապրանքներ գնող յերկրների:

է/ Միջազգային պրոլետարական շարժման ծավալումը, Մարքսի Էնգելսի գիտական սոցիալիզմի ծագումը:

## Հատված Զ. Կապիտալիզմի սկսված անկման դարաշրջանը.

/Ֆրանկո-պրուսական պատերազմից և Փարիզյան կոմմունայից սկսած մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Ռուսաստանում և իմպերիալիստական պատերազմի վերջը/:

### 1. Դարաշրջանի ընդհանուր բնութագիրը.

Ներածություն.– 1. Փարիզյան կոմմունայից և 1873թ. ճգնաժամից սկսած մինչև XIX դարի վերջը և 2. XIX դարի վերջից և 1900–1903թ.թ. ճգնաժամից սկսած մինչ Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և 1914–1918թ.թ. համաշխարհային իմպերիալիստական պատերազմի վերջը:

Իսպանա-ամերիկյան /1898թ./ Անգլո-բուրական /1899-1902թ.թ./ ռուս-ճապոնական /1904-1905թ./ պատերազմները և 1900-1903թ.թ. տնտեսական ճգնաժամը, վորպես համաշխարհային պատմության նոր էպոխայի գլխավոր ուղենիշները:

ա/ XIX-դարի վերջին յերրորդ մասը, վորպես կապիտալիզմի զարգացման բարձր՝ իմպերիալիստական ստադիային անցնելու շրջան:

1860-70-ական թվականները, վորպես ազատ կոնկուրենցիայի զարգացման բարձրագույն, սահմանային աստիճանը: Մոնոպոլիաները հազիվ նկատելի սաղմեր են միայն:

2. 1873թ. ճգնաժամից հետո՝ կարտելների զարգացման լայն շրջան է, սակայն կարտելները դեռ բացառություն են, նրանք դեռ հաստատուն չեն: Նրանք դեռ անցողական յերևույթ են:

3. XIX դարի վերջերում վերելքն ու 1900-1903թ.թ. ճգնաժամը, կարտելները դառնում են տնտեսական վողջ կյանքի հիմքերից մեկը: Կապիտալիզմը վերածվել է իմպերիալիզմի: /Լենին - իմպերիալիզմը եջ 16/:

բ/ Իմպերիալիզմի հինգ հատկանիշները, նրանց կոնկրետ պատմական զարգացման առումով: Արտադրության համակենտրոնացումը և մոնոպոլիաների ձևավորումը: Արտադրության հարաճուն համակենտրոնացումը /իբրև օրինակ բերել Գերմանիան և ԱՄՆ/: Ակցիոներական ընկերությունների զարգացումը: Կարտելները, սինդիկատները, տրեստները, կոնցեռնները Յեվրոպայում և Ամերիկայում:

/Մոնոպոլիաների գերիշխող դերը XIX դարի վեր-



ջերից սկսած/, վորպես արտադրության և կապիտալի հսկայական համակենտրոնացման արդյունք:

Պայքարի սրումը խոշորագույն մոնոպոլիստական ձեռնարկությունների և մոնոպոլիստների միությունների միջև:

Բանկերի նոր դերը և ֆինանսական կապիտալի կազմավորումը: Բանկերի զարգացումը և նրանց փոխարկվելը, համեստ միջնորդներից՝ մոնոպոլիստների: Բանկերի թվի աճը, ավանդների աճը, բանկային գործի կենտրոնացումը, մանր բանկերի կլանումը խոշոր բանկերի կողմից: «Մեծ հնգյակը» Անգլիայում, «[illegible]ները» Գերմանիայում, Փարիզի բանկերը և այլն: Փոքրաթիվ մոնոպոլիստական խոշորագույն բանկերի կապիտալի միաձուլվելը արդյունաբերականների մոնոպոլիստական միությունների կապիտալի հետ: Ֆինանսական կապիտալի կազմավորումը:

Կապիտալի արտահանման առանձնակի կարևոր նշանակությունը ի տարբերություն ապրանքների արտահանումից: Կարևորագույն յերկրներից արտահանվող կապիտալի դինամիկան: Ամենագլխավոր իմպերիալիստական յերկրների կապիտալ ներդրումների տեղաբաշխումը: Հետամնաց յերկրների ստրկացումը և շահագործումը վաշխառու յերկրների կողմից:

Աշխարհի բաժանումը կապիտալիստների մոնոպոլիստական ընկերությունների միջև: Կապիտալիստների միջազգային մոնոպոլիստական միությունների կազմավորումը:

Հումքի և վաճառահանման շուկաների բաժանումը կապիտալիստների մոնոպոլիստական կազմակերպություն-

ների միջև: Մետալուրգիա, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, նավթը, գունավոր մետաղների հանույթը, չիլիական բորակը, նավագնացությունը:

Միջազգային մոնոպոլիաների անկայուն և անհարատև վիճը:

Նրանց կազմալուծման պատճառները:

Աշխարհի տերրիտորիալ բաժանման ավարտումը և պայքարը նրա վերաբաժանման համար:

Աշխարհի բաժանման համար մղվող պայքարի սրվելը: Գաղութային հափշտակումների, նպատակների ու գաղութային շահագործման մեթոդների տարբերությունը նախորդ մինչմոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանի համեմատությամբ:

Աֆրիկայի և Պոլինեզիայի բաժանումը: Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային հափշտակումները: 1899-1902թ. անգլո-բուրական պատերազմը: Ռուսաստանի էքսպանսիան Ասիայում և անգլո-ռուսական մրցակցությունը:

Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի և ԱՄՆ-ի պայքարը աշխարհի բաժանման համար: Գերմանիայի գաղութային հափշտակումները Աֆրիկայում և Խաղաղ օվկիանոսի շրջանում: Չինաստանի բաժանման սկիզբը Ճապոնիայի կողմից: 1894-1895թ.թ. չին-ճապոնական պատերազմը: Մյուս պետությունների հափշտակումները Չինաստանում: Անգլո-ճապոնական դաշինքը և 1904-1905թ. ռուս-ճապոնական պատերազմը: 1898թ. իսպանա-ամերիկյան պատերազմը և ԱՄՆ-ի գաղութային հափշտակումները:

գ/ Արդյունաբերության, գյուղատնտեսության և



տրանսպորտի զարգացման հիմնական միտումները XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբում:

1873-1878թ.թ. ճգնաժամը, որպես XIX դարի ամենախոր պարբերական ճգնաժամը: Նրա յերկրից յերկիր զարգանալու առանձնահատկությունները: Նրա հատուկ խորության և յերկարատևության պատճառները:

Ենգելսը XIX դարի վերջին քառորդում առաջացած ցիկլային զարգացման բնույթի և փոփոխության մասին:

XIX դարի վերջին քառորդում տեղի ունեցած ագրարային ճգնաժամը, որպես Յեվրոպայի հացահատիկային տնտեսության ճգնաժամ:

Նրա պատճառները և նրա ազդեցությունը տնտեսական զարգացման վրա:

1900-1903թ.թ. ճգնաժամը, որպես համաշխարհային ճգնաժամ: Նրա առանձնահատկությունները և ազդեցությունը մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման վրա:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի հատկապես նավթային արդյունաբերության, գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության, քիմիական արդյունաբերության զարգացումը: Ալյումինի գործածությունը: Էլեկտրո-տեխնիկայի զարգացումը:

Տեխնիկական զարգացման տենդենցները, էլեկտրիֆիկացիան, [illegible] [illegible] ինտենսիֆիկացիան: Կոնվեյերը և նրա գործադրման պայմանները: Մոնոպոլիաները և տեխնիկական պրոգրեսը:

Տեխնիկայի զարգացման վերաբերյալ նորագույն փաստերը: Շոգու տուրբինան: Էլեկտրականության գործադրումը տեխնիկայի բնագավառում: Ջրի ուժի օգտագործումն էլեկտրականություն ստանալու համար: Էդիսոնը և նրա գործունեությունը: Ներքին այրման շարժիչների հայտնաբերվելը: Դիզել: Ավտոմոբիլը: Քիմիական պրոցեսը մետալուրգիայում: Ռադիոն /Պոպով, Մարկոնի/: Ավիացիայի զարգացումը: Միլիտարիզմ ազդումը: Կապը ռազմական տեխնիկայի զարգացման հետ:

Նոր յերևույթներ գյուղատնտեսության և տրանսպորտի զարգացման մեջ:

Մի քանի յերկրների տնտեսական զարգացման տեմպերի դանդաղումը, յերբ միաժամանակ աճում են ավելացած պրոդուկցիայի բաշխման մեծությունները: Այդ յերևույթի կապը կապիտալիստական նեխման հետ:

Դ/ Պարազիտիզմի աճումն և կապիտալիզմի նեխումը:

Կապիտալիզմի պատմական պրոգրեսիվ դերի սպառվելը: Տեխնիկական պրոգրեսի արգելակման տենդենցը: Անարտադրողական ծախսերի աճը: Մակաբուծական ռանտյեների աճումը: Արտասահմանի համար կատարվող արժեթղթերի էմիսիայի մեծացումը առաջավոր կապիտալիստական յերկրներում:

Ռանտյե /ռենտով ապրող/ դասակարգի աճը: Ռանտյե պետությունները:

Քաղաքական ռեակցիան:

Յե/ Բանվոր դասակարգի դրությունը և բանվորական շարժումը:

Շահագործման ուժեղացումը: Աշխատանքի ինտենսիֆի-



կացիան: Մոնոպոլիաները: Աշխատավարձի հետ մնալը գների աճումից և ռեալ աշխատավարձի անկումը:

Գործազրկության աճը: Բանվոր դասակարգի աղքատացումը: Հակասությունների սրվելը աշխատանքի և կապիտալի միջև:

Բանվորական, մասսայական կազմակերպությունների աճումը: Գործադուլների և լոկաուտների աճը: Տնտեսական գործադուլների տենդենցը վերաճելու քաղաքական գործադուլների:

Յերկու տենդենցի պայքարը բանվորական շարժման մեջ:

Գյուղացիական լայն մասսաների վիճակը: Գյուղացիությունը մոնոպոլիաների միջոցով շահագործելու ձևերը: Գների «մկրատը» հոսանքը դեպի քաղաքներն և բնակչության նվազումը գյուղում: Գաղութների աշխատավորության կրկնակի շահագործման ուժեղացումը:

Ցածր խավերի աղքատության աճը և հարստության կուտակումը վերնաշերտերի ձեռքում:

Համառոտ տվյալներ ֆինանսական օլիգարխիայի խոշորագույն ներկայացուցիչների /Ռոկֆելլեր, Դետերդինգ և այլն/ կարողության աճի մասին, ինչպես և արիստոկրատ կալվածատերերի գույքի չափերի մասին /օրինակներ՝ Անգլիայից, Գերմանիայից, Հնդկաստանից/:

Զ/ Կապիտալիզմի անհամաչափ զարգացման օրենքն իմպերիալիզմի դարաշրջանում:

Տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափությունը, որպես կապիտալիզմի անպայման օրենքը: Անհամաչափ զարգացման օրենքը իմպերիալիզմի եպո-

խայում: Նրա ներգործության արտահայտությունները Գերմանիայի, Ճապոնիայի, ԱՄՆ-ի և այլ յերկրների զարգացման մեջ: Աշխարհի վերաբաժանման անխուսափելիությունը ուժերի փոխհարաբերության փոփոխման կապակցությամբ:

Հակասությունների սրումը կապիտալիստական յերկրների ներսում, կապիտալիստական պետությունների միջև, գաղութների և մետրոպոլիաների միջև: Միլիտարիզմի արագ աճումը, պետական բյուջեների և պետական պարտքերի աճումը: Սպառազինման վազքը ծովի և ցամաքի վրա:

Իմպերիալիզմը բանվոր-դասակարգին ընդհուպ մոտեցնում է հեղափոխությանը. /Ստալին/:

## Զ. ՖՐԱՆՍԻԱՆ

ա/. Փարիզյան կոմմունան:

Ֆրանկո պրուսական պատերազմը: Ֆրանսիայի պատմությունը: Մարտի 18-ի հեղափոխությունը: Ազգային գվարդիայի կկ.:

Կոմմունայի հայտարարումը:

Կոմմունան, վորպես պրոլետարիատի դիկտատուրա, վորպես խորհրդային իշխանության «սաղմը»:

Հին պետական մեքենայի ջախջախումը և նրա փոխարինումը սկզբունքային նոր տիպի պետությամբ: Մշտական բանակի վերացումը և նրա փոխարինումը զինված ժողովրդով: Բոլոր իշխանությունների ընտրովի, պատասխանատու և փոխելի լինելը: Յեկեղեցու անջատումը պետությունից և դպրոցը յեկեղեցուց: Յեկեղեցական գույքերի էքսպրոպրիացիան: Կոմմունայի վորպես պրոլետարական պետության միջազ-



գային նշանակությունը:

Կոմմունայի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Անվճռողականությունը մասնավոր սեփականության նկատմամբ: Կոմմունան և ֆրանսիական բանկը: Կոմմունան և գյուղացիությունը:

«Ինչու գյուղացիական ռեզերվները բուրժուազիայի կողմում գտնվեցին» /Ստալին/:

Կոմմունայի բանվորական քաղաքականությունը: Բուռն պայքարը սաբոտաժի և հակահեղափոխության դեմ:

Միասնական պրոլետարական կուսակցության բացակայումը: Քաղաքական հոսանքների պայքարը կոմմունայի ներսում: Կոմմունայի սխալները:

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները կոմմունայի պատմական նշանակության, նրա պատմության պատճառների և դասերի մասին:

բ/. Ֆրանսիան 1871թ. հետո:

Տնտեսական զարգացման դանդաղած տեմպերը:

Կոմմունայի պարտության և ռեակցիայի հաղթանակի ազդեցությունը Ֆրանսիայի եկոնոմիկայի վրա: Ֆրանսիայի արդյունաբերական զարգացման մակարդակը և տեմպերը այլ յերկրների համեմատությամբ: Մոնոպոլիաների զարգացման առանձնահատկությունները:

Ֆրանսիական արդյունաբերության ճյուղային կառուցվածքը և նրա փոփոխությունները XIX դարի վերջին յերրորդում և XX դարի սկզբում:

<u>Բանվորական շարժումը Ֆրանսիայում XIX դարի վերջում և XX դարի սկզբին.</u>

Ժորեսը:

Գյուղատնտեսության զարգացման ուղիները:

Գյուղական բնակչության նվազումը և գյուղատնտեսության լճացած վիճակը: Գյուղացիության շերտավորումը: Վաշխառության ազդեցությունը գյուղացիական տնտեսության զարգացման վրա: Ֆրանսիական գյուղատնտեսության համեմատական հետամնացությունը:

Ազգաբնակչության թույլ աճի պատճառները: Արդյունաբերական և ագրարային պրոտեկցիոնիզմը: Նայի մաքսերի նշանակելը:

1892 թ. տարիֆը:

Արտաքին առևտրի և առևտրական նավատորմիղի դանդաղ աճումը:

Նախապատերազմյան Ֆրանսիայի վաշխառուական իմպերիալիզմը:

Բանկերի և նրանց ավանդների աճը:

Ֆինանսական օլիգարխիայի հզորությունը և ռանտյե դասակարգի զգալի մեծությունը, կապիտալի արտահանումը, նրա զգալի չափերը և ուղղությունը: Ֆրանսիական շուկայի դերը օտարերկրյա պետական փոխառությունների տեղավորման գործում: Ֆրանսիական բուրժուազիայի կապիտալ-ներդրումները ցարական Ռուսաստանում և ցարական կառավարությանը տված փոխառությունները:

Ֆրանսիայի վաշխառուական իմպերիալիզմը:

Ֆրանսիայի գաղութային նվաճումները և նրա վերածվելը /Անգլիայից հետո/ յերկրորդ գաղութային իմպերիայի:

Ֆրանկո-գերմանական հակասությունների զարգացումը:



## 3. Բրիտանական իմպերիան.

ա/ Արդյունաբերական հեգեմոնիայի կորուստը Մեծ Բրիտանիայի կողմից:

1878 թ. ճգնաժամը և նրա հետևանքները:

Արտադրության համակենտրոնացումը և մոնոպոլիաների առաջացումը:

Մոնոպոլիստական կազմակերպությունների զարգացման առանձնահատկություններն Անգլիայում:

Անգլիայի տնտեսական զարգացման տեմպերը և մակարդակը XIX դարի վերջին յերրորդ և XX դարի սկզբում և նրանց համեմատությունը Ֆրանսիայի, Գերմանիայի և ԱՄՆ-ի զարգացման տեմպերի և մակարդակի հետ:

Անգլիայի հետ մնալը տեխնիկայի ասպարեզում և դրա պատճառները:

Անգլիական արդյունաբերության ծանրության կենտրոնի տեղափոխումը տեքստիլից դեպի մետաղամշակումը և մեքենաշինությունը:

Քարածուխի արտահանման աճը և նրա պատճառները:

Անգլիական բանվորական օրենսդրությունը:

Անգլիայի, որպես առևտրական և ֆինանսական միջնորդի դերը համաշխարհային շրջանառության մեջ: Առևտրական բալանսի պասիվությունը և նրա պատճառները: Անգլիայի գերիշխանության պահպանումը ծովի վրա և գաղութներում:

Գաղութային նոր նվաճումները:

Անգլո-բուրական պատերազմը:

Կապիտալի արտահանման չափերը և ուղիները, նրա դերը երկրի էկոնոմիկայում: Անարտադրողական էլեմենտների աճը: Անգլիայի աստիճանական վերածումը ռանտյե պետության:

Կոնսերվատորներն և լիբերալները՝ իշխանության գլուխն անցած: Դիզրայելի - Բիկոնս-Ֆիլդ, Գլադստոն:

բ/ Գյուղատնտեսության տեսակարար կշռի հետագա անկումը երկրի էկոնոմիկայում:

XIX դարի վերջին քառորդում ծագած գյուղատնտեսական ճգնաժամի ազդեցությունը անգլիական գյուղատնտեսության վրա:

Ցորենի ցանքային տարածության կրճատումը և գյուղատնտեսության վերակառուցումը ինտենսիվ անասնաբուծության ուղղությամբ:

Հողային ռեֆորման Իռլանդիայում:

գ/ Մետրոպոլիայի տնտեսական կապերը դոմինիոնների և գաղութների հետ:

Անգլիայի առևտուրը իր դոմինիոնների և գաղութների հետ:

Պրեֆերենցիալ /արտոնյալ/ տարիֆների քաղաքականությունը դոմինիոններում: Պրոտեկցիոնիզմի և իմպերիալական մաքսային դաշինքի համար մղած պրոպագանդան Անգլիայում և նրա անհաջողությունը: Ջոզեֆ Չեմբերլենը: Անգլիական կապիտալի դերը դոմինիոններում և գաղութներում:

դ/ Բրիտանական Հնդկաստանը:

Գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման հիմնական մոմենտները:



Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղատնտեսության մեջ: Գյուղացիության ֆեոդալական շահագործման ուժեղացումը: Ագրարային գերբնակչության և գյուղացիական հողերի մանրացման աճը, վաշխառության և գյուղացիության հիպոթեկային պարտքերի աճը: Բրիտանական կապիտալի հետագա մուտքը Հնդկաստանի գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսական մթերքների արտահանումը Հնդկաստանից: Երկնակի շահագործումը: Գյուղացիության աղքատացման աճը:

Հնդկաստանի արդյունաբերական զարգացումը: Արտադրության միջոցներ արտադրող ճյուղերի զարգացման համարյա լիակատար բացակայությունը: Բամբակեղենի և ջուտի արդյունաբերության զարգացումը: Արդյունաբերական իրերի ներքին արտադրության և ներմուծման դինամիկան: Բրիտանական և տեղական կապիտալը հնդկական արդյունաբերության մեջ: Աշխատավարձը և աշխատանքի պայմանները: Բանվոր դասակարգի դրությունը: Տնտեսության հին ձևերի քայքայման արագ տեմպի և նոր ձևերի դանդաղ զարգացման միջև ստեղծված տարահարաբերությունը /[illegible]/ /[illegible]/ [illegible]ը, արտաքին առևտուրը և անգլիական կապիտալի դերը նրա ֆինանսավորման գործում: Անգլո-հնդկական կառավարության մաքսային քաղաքականությունը: Արծաթի արժեքի անկումը և ֆինանսական ռեֆորմները:

Հողային նեղվածությունը, մասսաների աղքատացումը: Սովը Հնդկաստանում: Բանվորական և գյուղացիա-

կան շարժումը: Ապագաղութացման «տեսությունը» և նրա քննադատությունը:

ԺԷ. Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան:

Այդ երկրների գաղութացման պատմությունը: Նրանց չափազանց թույլ բնակեցվածությունը մինչև եվրոպացիների գալը: Եվրոպացիների կողմից նրանց հափշտակելու, բնակեցնելու պատմության հիմնական մոմենտները:

Կանադայի Արևմուտքի սևահող տափաստանների բնակեցումը XIX դարի վերջում և XX դարում:

Համառոտ տվյալներ Ավստրալիայի և Նոր-Զելանդիայի գաղութացման մասին XIX դարի վերջին երրորդում և XX դարում:

Այդ երկրների գյուղատնտեսության զարգացման հիմնական մոմենտները: Ազատ հողերի հափշտակման պրոցեսը, հողային սեփականության բաշխումը և գյուղատնտեսության մեջ ծագած սոցիալական հարաբերությունների ձևավորումը քննարկվող երկրներում:

Ֆեոդալիզմի բացակայությունը և գյուղատնտեսության զարգացման ամերիկյան ուղին Կանադայում, Ավստրալիայում և Նոր-Զելանդիայում:

Հողային կցալի տարածությունների հափշտակումը Ավստրալիայում և Նոր-Զելանդիայում անասնաբույծների կողմից և խոշոր երկրագործության դերը այդ երկրներում Կանադայի համեմատությամբ:

Արոտավայրական էքստենսիվ անասնապահության զարգացումն Ավստրալիայում և Նոր-Զելանդիայում: Երկրագործության զարգացումն Ավստրա-



լիայում, լավագույն հողերի վրայից անասնապահության դուրս վանման հաշվին: Ցանքային տարածության նվազումը Կանադայում, սևահող Արևմուտքի գաղութացման հետևանքով:

Նոր Զելանդիայի գյուղատնտեսության պահպանված անասնապահական թեքումը:

Ամերիկյան գյուղատնտեսական տեխնիկայի տարածումը այդ երկրների գյուղատնտեսության մեջ:

Գյուղատնտեսական մեքենաների ներմուծումը ԱՄՆ-ից: Տվյալ երկրների բերքատվության համեմատումը Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ:

Ցանքի տարածությունների դինամիկան ըստ կուլտուրաների: Ցորենի դերը: Անասնաբուծության արդյունքների և հացի արտահանումը քննարկվող երկրներից, և նրանց դերը համաշխարհային գյուղատնտեսական շուկայում:

Նրանց գյուղատնտեսության արտահանական բնույթը: Երկաթուղային տրանսպորտի աճը: Բրիտանական կապիտալի դերը երկաթուղային շինարարության մեջ:

Երկաթուղային տրանսպորտի, սառեցման գործի զարգացման և օվկիանոսային փոխադրավարձերի իջեցման նշանակությունը XIX դարի վերջին երրորդում Կանադայի, Ավստրալիայի և Նոր-Զելանդիայի տնտեսական զարգացման համար:

Արդյունաբերության զարգացումը քննարկվող երկրներում:

Կանադայի ինդուստրացման պրոցեսը: Ավստրա-

լիայի արդյունաբերական զարգացման սկիզբը: Բանկերի զարգացումը, նրանց կապը օտարյերկրյա կապիտալի հետ:

Արտասահմանյան կապիտալը ժողովրդական տնտեսության մեջ:

Անգլիական և Ամերիկական կապիտալների պայքարը:

Տեղական կապիտալի հարաբերական թուլությունը:

Այդ յերկրների սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքները:

Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, վորպես մետրոպոլիաների կապիտալիստական սիստեմի շարունակություն «յերջանիկ Ավստրալիայի» և Կանադայի «գյուղացիական բարգավաճության» վերաբերյալ մանր բուրժուական լեգենդայի քննադատությունը:

Վ. Բրիտանական իմպերիայի ներքին հակասություններ: Անգլո-ամերիկյան հակասությունները:

## Կ. ԳԵՐՄԱՆԻԱ.

Գերմանիայի արագ ինդուստրացումը քաղաքական միավորումից և հինգ միլիարդ կոնտրիբուցիա ստանալուց հետո:

Գրյունդերության սկիզբը 70-ական թվականներին և նրա հետևանքները: 90-ական թվականների վերելքը գերմանական արդյունաբերության վիճակը ըստ 1882, 1895 և 1907 թվականների վիճակագրության: Ծանր արդյունաբերության ավելի արագ զարգացումը թեթևի համեմատությամբ:

Մետալուրգիայի զարգացումը Լոթարինգիայի



հանքանյութերը թոմասյան պրոցեսի միջոցով օգտագործելու հիման վրա:

Հանքանյութերի ներմուծումը: Առանձնակի հաջողությունները մեքենաշինության, էլեկտրոտեխնիկայի և քիմիայի ասպարեզում:

Գերմանիայի տեսակարար կշռի մեծացումը համաշխարհային տնտեսության մեջ:

Գերմանիայից կատարվող էմիգրացիայի կտրուկ կրճատումը XIX դարի 90-ական թվականներից սկսած:

Քաղաքային բնակչության աճը:

Բիսմարկի և նրա հետնորդների սոցիալական օրենսդրությունը:

Մոնոպոլիաների զարգացումը, բանկային կապիտալի միաձուլումը արդյունաբերականի հետ:

Արտաքին առևտրի և առևտրական նավատորմի զարգացումը:

Կապիտալի արտահանման չափերը և ուղիները:

Գերմանական բանվորական շարժումը:

Բ/. Զարգացման պրուսական ուղու հաղթանակը գյուղատնտեսության մեջ:

Գերմանական գյուղատնտեսության սոցիալական կառուցվածքը ըստ 1882թ. 1895, 1907 թվականների վիճակագրությունների:

Արևմտյան և Արևելյան Գերմանիայի տարբերությունը: Գերմանիայի գյուղատնտեսական պրոլետարիատ: Յունկերական գյուղացիական և խոշոր տնտեսության վորպես կապիտալիստա-ձեռնարկատիրական տնտեսության կազմակերպումը:

Վարձակալական հարաբերությունների համեմատաբար թույլ զարգացումը գերմանական գյուղատնտեսության մեջ:

Տեխնիկական հաջողությունները գյուղատնտեսության մեջ: Երկրագործության քիմիականացման և ագրոտեխնիկայի աճը, հարոս թողած տարածության կրճատումը, արմատապտուղների և կերային տարածության աճը, գյուղատնտեսական մեքենաների կիրառման աճումը, վոչխարաբուծության դուրս վանումը խոզաբուծության կողմից:

Բերքատվության կտրուկ աճը: Գերմանիայի և Անգլիայի պատերազմի նախօրյակին սեփական պարենով ապահովվածության համեմատությունը:

Արդյունաբերական ագրարային պրոտեկցիոնիզմը: 1879 և 1902 թվականների մաքսային տարիֆների համառոտ բնութագիրը:

Առևտրական պայմանագրերը Ռուսաստանի հետ:

դ/ Գերմանական էքսպանսիան:

Գաղութային հափշտակման գործին ուշացումը Գերմանիայի կողմից և դրա պատճառները: Գերմանական էքսպանսիայի ուղիները: Անգլո-գերմանական հակասությունը, վորպես նախապատերազմյան շրջանի հիմնական հակասությունը:

Քաղաքական բլոկները XIX դարի վերջում և XX դարի սկզբին և Գերմանիան: Եռյակ դաշինքը:

ե/ Գիլֆերդինգի և Զոմբարտի հայացքները: Գերմանիայի տնտեսական զարգացման բնույթի և պատճառների մասին և նրանց քննադատությունը:



## 5. ԻՏԱԼԻԱ.

ա/ Իտալիայի տնտեսական զարգացման մակարդակը, նրա վերամիավորումից առաջ: Գյուղատնտեսության գերակշռումը յերկրի եկոնոմիկայում: Ֆեոդալիզմի մնացորդները գյուղատնտեսության մեջ: Լատիֆունդիաները և նրանց աշխարհագրական բաշխումը:

Վարձակալական հարաբերությունները: Գյուղատնտեսական պրոլետարիատը: Գյուղատնտեսական ցածր տեխնիկան և ցածր բերքատվությունը: Իտալիայի հետամնացությունն արդյունաբերության զարգացման տեսակետից:

Յերկրի հյուսիսի և հարավի եկոնոմիկայի տարբերությունը:

բ/ Իտալիայի տնտեսական զարգացումը նրա վերամիավորումից հետո:

Յերկաթուղային ցանցի և ապրանքաշրջանառության զարգացումը նրա միավորումից և մաքսային պատնեշների վոչնչացումից հետո: Հյուսիսի արդյունաբերական զարգացումը:

Թեթև արդյունաբերություն՝ առանձնապես մետաքսի և բամբակեղենի արդյունաբերության աճն ու գերակշիռ նշանակությունը:

Ելեկտրոտեխնիկայի և մեքենաշինության զարգացումը: Վառելանյութի և հումքի պրոբլեմը: Բանվորական շարժումը:

Պրոտեկցիոնիզմը: 1887 թվի մաքսային տարիֆը մաքսային պատերազմը Ֆրանսիայի դեմ:

Կապիտալիզմի զարգացումը գյուղատնտեսու-

մեջ: Գյուղատնտեսական տեխնիկայի բարելավումները: Ֆեոդալիզմի մնացորդները և նրանց դերը, մանավանդ հարավում:

Հարաբերական ագրարային գերաբնակեցությունը և էմիգրացիայի աճը:

## Բանկերը և ֆինանսական կապիտալը Իտալիայում.

Ներքին շուկայի նեղ լինելը: Արտահանման և ներմուծման կապը և արտաքին առևտրի դինամիկան: Արտաքին առևտրի ուղղությունը: Բալկանները և Մերձավոր Արևելքը, որպես իտալական ապրանքների վաճառահանման շուկա:

Իտալական գաղութները և իտալական իմպերիալիզմը: Թուրքական պատերազմի աճը: Հարկադրման ավելի մեծ ծանրությունը Արևմտա-յեվրոպական պետությունների մեծ մասի համեմատությամբ:

գ/ Միջազգային հարաբերությունները XIX դարի վերջում և XX դարի սկզբում և Իտալիան:

Բալկանական պրոբլեմը: Տրիպոլին: Յեռյակ դաշինքը:

## Ե. Ամերիկայի միացյալ նահանգները.

ա/ ԱՄՆ-ի ինդուստրացման՝ բուրժուական յերկրների համար բացառիկ տեմպերը XIX դարի վերջին յերրորդում և նրանց պատճառները:

Ծանր արդյունաբերության բուռն զարգացումը:

ԱՄՆ իր ինդուստրիալ զարգացման մակարդակով գերազանցում է Անգլիային:



Ամերիկական արդյունաբերության տեխնիկական զարգացման առանձնահատկությունները: Մաքսային հարկադրման զարգացման հիմնական մոմենտները:

Մակ-Կինլեյի 1890 թ. տարիֆը:

ԱՄՆ-ի ինդուստրացման պրոցեսի տարբերությունը Անգլիայի ինդուստրացման պրոցեսից:

Ամերիկական արդյունաբերությունը և արտաքին շուկան XIX դարի վերջին յերրորդում: Արտահանման և ներմուծման կազմի փոփոխությունը:

Բանվորների դրությունը և բանվորական շարժումը ԱՄՆ-ում:

բ/ ԱՄՆ-ի գյուղատնտեսության զարգացման հիմնական գծերը XIX դարի վերջին յերրորդում և XX դարի սկզբին:

Ամերիկյան գյուղատնտեսության զարգացման պայմանները: Հացահատիկային կուլտուրաներին՝ առանձնապես ցորենի հատկացված ցանքային տարածության հսկայական աճը, այսպես կոչված «Միջին Արևմուտքի» նոր հողերը վարելու հաշվին:

Նոր ձևերը գյուղատնտեսական մեքենայացման մեջ և գյուղատնտեսական մեքենաների լայն տարածումը, մանավանդ հացահատիկային շրջաններում: Աշխատանքի արտադրողականության աճը, բերքատվության կայունությունը և նույնիսկ նրա մասնակի նվազումը, հողի գիրատին ուժասպառման հետևանքով:

Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման մակարդակի և տեմպերի համեմատությունը: Ֆերմերի արտաքսման աճը: Յերկարուղային ցանցի և

և ծովային փոխադրավարձերի իջեցման դերը ցորենի արտահանման աճման գործում: ԱՄՆ-ը որպես Յեվրոպայի շտեմարան:

Ազատ հողերի հիմնական զանգվածների սպառումը XIX դարի վերջերին, հողի գների, հողային ռենտայի, հողի վարձակալման և գյուղատնտեսական մթերքների գների բարձրացման սկիզբը:

Ամերիկական նախապատերազմյան գյուղատնտեսության լենինյան վերլուծումը: ԱՄՆ-ի հողագործության բնագավառում կապիտալիզմի զարգացման վերաբերյալ նորագույն տվյալների մասին Լենինի աշխատության մեթոդոլոգիական նշանակությունը:

Կապիտալիզմի զարգացումը ամերիկական հողագործության մեջ: ԱՄՆ-ի գյուղատնտեսական արտադրության աճի դանդաղեցումը XIX դարում: Ցորենի արտահանման անկումը և հացի ներքին շուկայի աճը:

գ/. ԱՄՆ-ի յերկաթուղային տրանսպորտի արագ աճը XIX դարի վերջին յերրորդում: Ռահվիրայական /пионерские/ յերկաթուղային գծերը: Անդրկոնտինենտալ գծերը: Յերկաթուղային շինարարության ֆինանսավորման աղբյուրները: Յերկաթուղային ընկերություններին հողեր հատկացնելը կառավարության կողմից, դրամական նպաստները, կապիտալի ներհոսանքը Յեվրոպայից: Յերկաթուղային ընկերությունների չարաշահությունները: Կոնգրեսի անդամների և պաշտոնավորների կաշառումը: Նախկին բազմաթիվ յերկաթուղային ընկերությունների միավորելու և մի քանի հզորագույն ֆինանսական խմբեր կազմելու սկիզբը:



Գետային տրանսպորտի անկումը:

դ/. Բանկերի և վարկերի զարգացման հիմնական մոմենտները: Ֆեդերալ ռեզերվային բանկերի մասին օրենքը:

ե/. Ամերիկական տնտեսության և ազգաբնակչության տեղաբաշխման մեջ առաջացած աշխարհագրական տեղաշարժերը:

Շարժումը դեպի Արևմուտք: Նրա չափերը և հետևանքները:

զ/. Ամերիկական իմպերիալիզմի ծագումը: Արտադրության համակենտրոնացումը, մոնոպոլիաների ծագումը և զարգացումը: Հակատրեստային օրենսդրությունը թղթի վրա և իրականությունը:

Իսպանա-ամերիկյան պատերազմը, որպես ամերիկյան պատմության նոր էպոխայի պատմական ուղենիշ:

Պատերազմի արդյունքները: «Բաց դռների» սկզբունքը Չինաստանում: Արտադրության հետագա համակենտրոնացումը 1897-1904 թվականները, որպես մի ժամանակաշրջան, յերբ առանձնապես զարգանում են մոնոպոլիաները և ծագում է այժմ գոյություն ունեցող մոնոպոլիստական կազմակերպությունների մեծ մասը, նույն թվում նաև պողպատի կորպորացիան:

Յերկաթուղային ընկերությունների սերտ աճումը արդյունաբերության և բանկային խմբավորումների հետ, Մորգանի, Ռոկֆելլերի և մյուսների մոնոպոլիստական գրուպաների զարգացումը: Ամերիկական ժողովր

դական տնտեսության աճման տեմպերի դանդաղեցման տենդենցները լայնի բազմակողմ չափերի միաժամանակ բարձրացման պայմաններում: ԱՄՆ-ի առավելության աղբյուրների թուլացման սկիզբը:

Ամերիկական կապիտալիզմի անտրոստրողական նախասերի աճը:

XX դարի արդյունաբերության կարևորագույն ճյուղերի զարգացման մասին տվյալները: Նավթային արդյունաբերության ուժեղ աճման պատճառները:

1907 թ. ճգնաժամը և նրա ազդեցությունը ԱՄՆ-ի էկոնոմիկայի վրա:

ա/. Միացյալ Նահանգների էքսպանսիան: Հարաբերական գերբնակչության աճը: Նուկայի արտաքին սորվելը: Արդյունաբերական ապրանքների արտահանման չափը արտադրության համեմատությամբ: Կապիտալի արտահանումը: Էքսպանսիան կենտրոնական և հարավային Ամերիկայում և խաղաղ օվկիանոսի ավազանում:

Այդ էքսպանսիայի շարժիչ ուժերը և նշանակությունը: Թեոդոր Ռուզվելտը: Տաֆտը և «դոլլարի դիպլոմատիան»:

Պանամայի ջրանցքի կառուցման աշխատանքները: Ճապոնա-ամերիկյան անտագոնիզմը: Անգլիան և Միացյալ Նահանգները իմպերիալիզմի նախապատերազմյան շրջանում:

Միացյալ Նահանգների տեսակարար կշիռը համաշխարհային տնտեսության մեջ պատերազմի նախօրյակին:



## 7. ՃԱՊՈՆԻԱ

Մեյձիի հեղափոխությունից հետո անցկացրած բուրժուական ռեֆորմների կիսակատարությունը: Ֆեոդալիզմի էլեմենտների ուժեղ պահպանումը էկոնոմիկայում և քաղաքական կարգերում:

Կիսաֆեոդալական միապետական բյուրոկրատիայի աճը, նրա բլոկը բուրժուազիայի և կալվածատերերի վերնախավերի հետ:

Կապիտալիզմի արմատավորման քաղաքականությունը ֆեոդալիզմի մնացորդների, միաժամանակ պահպանման պայմաններում:

Ռազմական արդյունաբերության յուրահատուկ արմատավորումը: Թեթև արդյունաբերության առեղծումը /բամբակեղեն, մետաքս և այլն/: Պետական միջոցներով արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծելը կառավարության կողմից և նրանց հետագա հանձնումը մասնավոր կապիտալին:

Ագրարային հարաբերությունները Մեյձիի ռեֆորմներից հետո: Բրնձի ցանքային տարածությունների դանդաղ աճը, հետամնաց տեխնիկայի պահպանումը գյուղատնտեսության մեջ, բերքատվության բարձրացումը պարարտանյութերի կիրառման կապակցությամբ: Մետաքսագործության զարգացումը և մետաքսի արտահանումը:

Ներքին շուկան և նրա ազդեցությունը գյուղացիության վիճակի և գյուղատնտեսության զարգացման վրա:

Ներքին շուկայի նեղ լինելը և հարաբերական գերբնակչության սուր բնույթը ֆեոդալիզմի մնացորդների հսկայական տեսակարար կշռի հետևանքով: Աբսոլյուտիստական կառավարության ռազմական ավանտյուրիզմը: Ճապոնիայի վաղ շրջանի տերրիտորիալ էքսպանսիայի նախասկզբնական կուտակման բրանները: 1894-95 թ.թ. Չին-ճապոնական պատերազմը:

Այդ պատերազմից հետո ձեռք բերված կոնտրիբուցիայի և տերրիտորիալ նվաճումների ազդեցությունը Ճապոնիայի տնտեսական զարգացման վրա: Յերեք պետությունների միջամտությունը Լյաոդունյան թերակղզու առթիվ:

Հակասությունների խաղաղ օվկիանոսյան հանգույցի ծագումը /Խաղաղ օվկիանոսի պրոբլեմը/:

Արտադրության համակենտրոնացումը և մոնոպոլիաները: Ակցիոներական ընկերությունների զարգացումը: Միցուի, Միցուբիսի, Սումիտոմոյի, Յասուդայի, Սիբուսավայի կոնցերները: Յավատայի գործարանների ստեղծումը 1900թ. ճգնաժամի ազդեցությունը Ճապոնիայի էկոնոմիկայի վրա: Ռուսաստանի դեմ պատերազմելու նախապատրաստությունները:

1902թ. Անգլո-ճապոնական դաշնադրությունը և նրա նշանակությունը: Ռուս.-ճապոնական պատերազմը: Անգլիայի և ԱՄՆ-ի ֆինանսական օժանդակությունը Ճապոնիային:

Ճապոնիայի տնտեսական ուժասպառումը պատերազմի վերջում: Ճապոնա-ամերիկյան անտագոնիզմը ռուս.-ճապոնական պատերազմից հետո: 1907թ. արդյու-



նաբերական ճգնաժամը: Ճապոնական արդյունաբերության զարգացումը ճգնաժամից հետո:

Ճապոնիայի առաջխաղացման ներքին և արտաքին գործոնները:

Արտասահմանյան տեխնիկայի նվաճումների օգտագործումը: Խաղաղ օվկիանոսի կղզիները՝ Կորեան, Չինաստանը բռնագրավելու հարմարությունը: Գաղութային ավազակությունը - ռազմական հաղթանակները, ճապոնական պրոլետարիատի և գյուղացիության գաղութային շահագործումը, որպես կապիտալների կուտակումն արագացնող աղբյուրներ: Անգլիայի և ԱՄՆ-ի շահագրգռվածությունը XIX դարի վերջում և XX դարի սկզբում Ճապոնիայի առաջքաշման գործում և նրանց օգնությունը Ճապոնիայի տիրող դասակարգերին:

## 8. ՉԻՆԱՍՏԱՆ.

Չինական մանր արդյունաբերության, նավակային և այլ զբաղմունքների խոր ճգնաժամը XIX դարի վերջին յերրորդում, արտասահմանյան ապրանքների ներխուժման և օտարյերկրյա նավագնացության զարգացման ազդեցության տակ: Գյուղատնտեսական մշակույթների ապրանքայնության աճը: Գյուղացիության ֆեոդալական շահագործման ուժեղացումը: Հարաբերական գերբնակչության աճը, մասսաների աղքատացումը:

Չին-ճապոնական պատերազմում կրած պարտության նշանակությունը: «Պայքար կոնցեսիաների համար» և Չինաստանի բաժանումը ազդեցության շրջանների:

Տեղական կապիտալի դանդաղ զարգացումը: Բոքսյորական ապստամբությունը, նրա բնույթը և պատմական նշանակությունը: Չինաստանի հետագա ստրկացումը և նրա վերածումը կիսագաղութի:

1911թ. չինական հեղափոխությունը, նրա շարժիչ ուժերը, բնույթը և նշանակությունը:

Սուն-Յատ-Սենը: Նրա կազմակերպած կուսակցության դասակարգային էությունը, ծրագիրը և նշանակությունը: Նրա տնտեսական ծրագիրը: Յուան-Շիկայի կառավարության տնտեսական քաղաքականությունը: Օտարերկրյա կապիտալը Չինաստանում և նրա դերը 1914թ. նախօրյակին:

Գ. 1914-1918թ. առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը և կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սկիզբը:

Անգլո-գերմանական հակասությունը, վորպես նախապատերազմյան իմպերիալիզմի հիմնական հակասություն: Անգլիայի և Գերմանիայի մրցակցությունը չուգունի և պողպատի արտադրության մեջ և արտադրողական հզորության մակարդակի խնդրում:

Վաճառահանման շուկաների, հումքի աղբյուրների, կապիտալի գործադրման ոլորտների համար մղվող պայքարի սրվելը:

Ֆրանկ-գերմանական հակասությունները: Ռուս-գերմանական հակասությունները: Յեռյակ դաշինքը և անտանտը: Իմպերիալիստական պետությունների յերկու բանակի պայքարը գերիշխանության և աշխարհի վերաբաժանման համար, վորպես պատերազմի պատճառ:



Գերմանիան, վորպես պատերազմի անմիջական հրձիգը:

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի հասունացումը, վորպես իմպերիալիզմի եպոխայի անհամաչափ զարգացման որենքի ներգործության արտահայտություն:

Անհամաչափ զարգացման որենքը և մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը:

Պատերազմը և ժողովրդական տնտեսությունը: Պրոլետարիատի, գյուղացիության և քաղաքային մանր բուրժուազիայի դրությունը:

«Համաշխարհային կապիտալիզմի ֆրոնտի թուլացումը, այդ ֆրոնտը առանձին յերկրների պրոլետարների կողմից ճեղքելու հնարավորությունը» /Ստալին/:

Կապիտալիստական շղթան ճեղքելու համար, անհրաժեշտ պայմանների ստեղծումը Ռուսաստանում: Պատերազմի դերը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամն արձակելու գործում:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և համաշխարհային տնտեսության պառակտումը:

Մարդկային պատմության նոր դարաշրջանի սկիզբը:

Յերկու սիստեմի պայքարը: Կապիտալիզմի նեխման ուժեղացումը և նրա հավասարակշռության խախտումը: Իմպերիալիզմի հիմքերի սասանվելը գաղութային և կախյալ յերկրներում կապիտալիզմի զարգացումն այդ յերկրներում և վաճառահանման շուկաների համար մղվող պայքարի սրումը: Ձեռնարկությունների խրոնիկական թերբեռնվածությունը և գործազուրկների մշտական

բանակների առաջանալը:

Միջազգային հեղափոխական պրոցեսը: Վերսալի դաշնագիրը և նրա ազդեցությունը միջազգային հակասությունների զարգացման վրա:

Հետ-պատերազմյան կապիտալիզմի զարգացման յերեք ժամանակաշրջանները:

ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի միջազգային հեղափոխական նշանակությունը: Յերկու աշխարհի հարաճուն հակադրությունը:

## Հատված III. Կարևորագույն կապիտալիստական յերկրների տնտեսական պատմությունը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի շրջանում.

### 1. Ամերիկայի միացյալ նահանգները.

Արդյունաբերական արտադրական ապարատի զգալի աճը և ցանքսերի տարածության լայնացումը ԱՄՆ-ում համաշխարհային պատերազմի ժամանակ՝ Յեվրոպական պետություններին ռազմական հանդերձանք և պարենային ապրանքներ մատակարարելու կապակցությամբ: ԱՄՆ-ը յեվրոպական պետությունների պարտապանից վեր է ածվում նրանց վարկատուի:

1920-21 թ.թ. ճգնաժամը և նրա անսովոր խորությունը: Արդյունաբերության զգալի վերելքը ԱՄՆ-ում ճգնաժամից հետո: Բնակարանային շինարարության, ավտոմոբիլների և այլնի դերը: Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի արտահայտությունները մանածագործական և քարածխային արդյունաբերության



լճացած վիճակը, խրոնիկական ագրարային ճգնաժամը, գործազուրկների մշտական բանակի զգալի չափերը և այլն: Մասնակի ճգնաժամերը 1924 և 1927 թվականներին:

ԱՄՆ-ի տեսակարար կշռի աճը համաշխարհային կապիտալիստական տնտեսության մեջ, նրանց վերածվելը գլխավոր կապիտալիստական յերկրի:

Կապիտալի արտահանումը ԱՄՆ-ից հետպատերազմյան շրջանում և Նյու-Յորքի, որպես դրամական շուկայի դերը: ԱՄՆ-ի առևտրական էքսպանսիան: Անգլո-ամերիկյան հակասության սրումը: Ճապոնա-ամերիկյան հակասությունը: 1921-22 թ.թ. Վաշինգտոնյան կոնֆերանսը և նրա նշանակությունը: ԱՄՆ-ի տնտեսական էքսպանսիան Լատինական Ամերիկայում, Խաղաղ Օվկիանոսի ավազանում և յեվրոպական պետություններում:

Միջդաշնակցային պարտքերի պրոբլեմը: Դաուեսի և Յունգի պլանների նշանակությունը ամերիկական կապիտալիզմի համար:

1929-1933 թ.թ. ճգնաժամը, նրա արտակարգ սրությունը ԱՄՆ-ում: Բանկային սիստեմի կրախը 1933 թ. և ոսկու ստանդարտից հրաժարվելը:

Ռուզվելտը և տնտեսական վերականգնման նրա ծրագիրը:

Դասակարգային պայքարի սրվելը ԱՄՆ-ում: Պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների աճումը: Ճգնաժամի ազդեցությունը ԱՄՆ-ի միջազգային դիրքերի վրա:

Կապիտալի արտահանման դադարեցումը և արտասահման արտահանված կապիտալների մի մասի կորուստը:

Համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ ԱՄՆ-ը յերկրորդ տեղն է մղվում Անգլիայի կողմից: Ճապոն-ամերիկյան հակասությունների սրումը Ճապոնիայի կողմից Մանջուրիան հափշտակելու և Չինաստանում ագրեսիայի շարունակելու կապակցությամբ:

Տնտեսական կոնյունկտուրայի աշխուժացումը և նրա տատանումները 1929-1933 թվականների ճգնաժամից հետո: Հատուկ տեսակի դեպրեսիան ԱՄՆ-ում: Նոր ցիկլային ճգնաժամի սկիզբը:

Գերմանա-ամերիկյան հակասությունների սրումը Յեվրոպայում և լատինական Ամերիկայում ֆաշիստական Գերմանիայի էքսպանսիայի կապակցությամբ:

## 2. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱՆ.

Համաշխարհային պատերազմի ազդեցությունը Անգլիայի էկոնոմիկայի վրա: Ռազմական արդյունաբերության և նրա հետ կապված ծանր ինդուստրիայի ճյուղերի զարգացումը: Բամբակեղենի և քարածխային արդյունաբերության անկումը: Արտաքին առևտրի կրճատումը և շուկաների մի մասի կորուստը: Արտասահմանյան ինվեստիցիաների նվազումը: Միացյալ նահանգներին տրվելիք ռազմական պարտքը: Աշխատավարձի անկումը:

Պատերազմի հետևանքով ձեռք բերված տերրիտո-



րիաները, նրանց նշանակությունը անգլիական էկոնոմիկայի համար:

Հետպատերազմյան կարճատև աշխուժացումը: 1920-21 թ.թ. ճգնաժամը, նրա խորությունը և սրությունը: 1920-1921 թ.թ. խոշոր գործադուլները: Ճգնաժամից հետո սկսված աշխուժացման աննշանելիությունը: Մանածագործության, քարածխային արդյունաբերության և նավաշինության խրոնիկական լճացած վիճակը: Այդ ճյուղերի անկման պատճառները: Ձեռնարկությունների բեռնվածությունը և գործազուրկների մշտական բանակի նշանակ չափերը:

Յերկրի «հարվածված» շրջանները: Վերադարձը վոսկու պարիտետին /1925թ./ և նրա ազդեցությունը տնտեսական զարգացման վրա:

Հանքագործ բանվորների գործադուլը և ընդհանրական գործադուլը 1926 թ., արտադրության հետպատերազմյան և նախապատերազմյան մակարդակի հարաբերակցությունը:

1929-1932 թ.թ. ճգնաժամը և նրա համեմատաբար ավելի նվազ սրությունն Անգլիայում քան ԱՄՆ-ում, Գերմանիայում և այլ յերկրներում: Վոսկու ստանդարտից հեռանալը: «Ստերլինգյան բլոկը» և նրա ազդեցությունը Անգլիայի առևտրական դիրքերի վրա: Օտտավայի կոնֆերանսը, նրա վորոշումների նշանակությունը: Պրոտեկցիոնիզմը: Անգլիայի տնտեսական դիրքերի ուժեղացումը համաշխարհային կապիտալիստական տնտեսության մեջ:

Հատուկ տեսակի դեպրեսիան և տնտեսակա

աշխուժացումը ճգնաժամից հետո։ Արդյունաբերության նոր ճյուղերի դերը։ Ռազմական արդյունաբերության և ռազմական շինարարության դերը։ Մանածագործական, քարածխային արդյունաբերության և նավաշինության շարունակվող անկումը։ Հարաբերակցությունը նախապատերազմյան մակարդակի հետ։ Նոր ճգնաժամի հասունացումը։

Կապիտալի արտահանումը, նրա ուղղությունը և դերը Անգլիայի հետպատերազմյան շրջանում։ Անգլո-խորհրդային առևտրական հարաբերությունները։ Անգլիայի առևտրական և վճարային բալանսը։ Անգլո-ամերիկյան, անգլո-ճապոնական, անգլո-գերմանական և անգլո-իտալական հակասությունները։ Անգլիայի կառավարության միջազգային քաղաքականության ռեակցիոն բնույթը։ Դասակարգային հակասությունների և քաղաքական պայքարի սրումը ժամանակակից Անգլիայում։

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ՝ Հնդկական արդյունաբերության զարգացումը համաշխարհային պատերազմի տարիներին, տեղական բուրժուազիայի և պրոլետարիատի աճը։ Գյուղացիության դրության վատթարացումը գյուղատնտեսական մթերքների արտահանման կրճատման պատճառով։ Գյուղացիների պարտքերի աճումը։ 1918-19 թ.թ. սովը։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությունը Հնդկաստանի վրա։ Հեղափոխական վերելքը 1919-22 թ.թ. բանվորական շարժումը։ Անգլիական իմպերիալիզմի ռեակցիոն, հնդկական



արդյունաբերության զարգացումը խանգարող քաղաքականությունը Հնդկաստանում։ Արտադրական միջոցների արտադրության բացակայումը։ 1929-1933 թ.թ. ճգնաժամը և նրա ազդեցությունը Հնդկաստանի էկոնոմիկայի վրա։ «Քաղաքացիական անհնազանդության» կամպանիան։ 1935 թ. սահմանադրությունը, նրա հակաժողովրդական, իմպերիալիստական բնույթը։ Բրիտանական կապիտալները Հնդկաստանում և նրանց տեղավորումը։ Անգլո-հնդկական առևտրական հարաբերությունների դինամիկան հետպատերազմյան շրջանում, պայքար բանվորական շարժման միասնության և ժողովրդական միասնական հակաիմպերիալիստական ֆրոնտի համար։ Բրիտանական դոմինիոնները։ Նրանց արդյունաբերության և գյուղատնտեսության աճումը համաշխարհային պատերազմի ժամանակ։ Նրանց ինդուստրիայի զարգացումը հետպատերազմյան շրջանում։ Անգլո-ամերիկյան մրցակցությունը Կանադայում։ Ֆերմաների շերտավորումը Կանադայում։ Կանադական պուլը, նրա պատմությունը և նշանակությունը։ 1920-1921 թ.թ. ու 1929-1933 թ.թ. ճգնաժամերի ինչպես և հետպատերազմյա ագրարային ճգնաժամի ազդեցությունը Կանադայի, Ավստրալիայի, Հարավ-աֆրիկյան միության էկոնոմիկայի վրա։ Դոմինիոնների և Անգլիայի տնտեսական և քաղաքական փոխհարաբերությունների էվոլյուցիան հետպատերազմյան շրջանում։

Գաղութների դերն Անգլիայի հետպատերազմյան տնտեսական զարգացման գործում։

## 3. ՖՐԱՆՍԻԱ.

Համաշխարհային պատերազմի ազդեցությունը Ֆրանսիայի էկոնոմիկայի վրա: Արդյունաբերական հիմնական շրջանների ավերումը գերմանական զորքերի կողմից: Արդյունաբերական [illegible] շինարարությունը Ֆրանսիայում պատերազմի տարիներում: Ծանր արդյունաբերության տեսակարար կշռի և նրա մեխանիզացիայի աճը պատերազմի հետևանքով: Արտասահմանյան կապիտալ ներդրումների քայքայումը: Գյուղատնտեսության անկումը և կենսամթերքների և ներմուծման աճը:

Էլզաս-Լոթարինգիան Ֆրանսիային կցելը, Սաարի ավազանը 15 տարով Ֆրանսիային հանձնելը, ռեպարացիաների հաշվին կատարվող նատուրալ մատակարարումների տնտեսական նշանակությունը:

Քայքայված մարզերի վերականգնումը և նրա ազդեցությունը ֆրանսիական էկոնոմիկայի վրա: Արդյունաբերական վերելքը, նրա համեմատական յերկարատևության պատճառները: Ֆրանկի արժեզրկումը և նրա հետագա կայունացումը: Ֆրանսիական գաղութների դերը մետրոպոլիայի տնտեսական զարգացման համար:

1930-1935թ.թ. ճգնաժամը: Նրա ուշ սկսվելը և առանձնապես յերկարատևելու պատճառները: Հատուկ տեսակի դեպրեսիան: Ֆրանսիական արտահանման կրճատումը: Ֆրանկի դեվալվացիան: Ֆրանկ-գերմանական և ֆրանկ-բրիտանական հակասությունները: Ֆրանկո-խորհրդային հարաբերությունները: Դասակարգային հակասությունների սրումը Ֆրանսիայում: Միաս-



նական ժողովրդական ճակատը, նրա տնտեսական ծրագիրը:

## 4. ԳԵՐՄԱՆԻԱ

Ռազմական արդյունաբերության աճը, արդյունաբերության «քաղաքացիական» ճյուղերի և գյուղատնտեսության սաստիկ անկումը համաշխարհային պատերազմի ժամանակ:

Գերմանիայի տերիտորիալ կորուստների տնտեսական նշանակությունը: Հետպատերազմյան ինֆլյացիան, նրա չափերը և ազդեցությունը գերմանական էկոնոմիկայի վրա: 1923թ. տնտեսական և քաղաքական ճգնաժամը: Ռեպարացիոն պրոբլեմը: Դոուեսի պլանը: Յունգի պլանը: Մարկի կայունացումը և արդյունաբերական վերելքի սկիզբը: 1926թ. մասնակի ճգնաժամը: Կապիտալիստական ռացիոնալիզացիան Գերմանիայում և նրա ազդեցությունը բանվոր դասակարգի դրության վրա: Ձեռնարկությունների թերաբեռնվածությունը և գործազուրկների մշտական բանակը: Ամերիկյան կապիտալի առհոսումը և նրա դերը արդյունաբերական վերելքի ուժեղացման գործում: Համեմատություն նախապատերազմյան մակարդակի հետ: Խորհրդային-գերմանական առևտրական հարաբերությունները: 1929-33 թ.թ. ճգնաժամի առանձնապես սուր բնույթը Գերմանիայում: Հատուկ տեսակի դեպրեսիան ճգնաժամից հետո: Ֆաշիստական հեղաշրջումը: Աշխարհի վերաբաժանման համար պատերազմի նախապատրաստումը և ավտարկիայի ուղղությամբ ընթանալը: Ավտարկիայ

քաղաքականության նախորդումը: «Կարագի փոխարեն թնդանոթներ», «յուղի փոխարեն թնդանոթներ» և այլն: Սուրոգատների արտադրության ուժեղացումը, անշահավետ հանքերի հանույթը և անարտադրողական ծախսերի աճը ժողովրդական տնտեսության մեջ: Ֆաշիստական ագրարային քաղաքականության, գների քաղաքականության և այլնի հետեվանքով առաջացած գյուղատնտեսության ճգնաժամը: Աշխատավորների վիճակի վատացումը: Ժողովրդական մասսաների սիստեմատիկ թալանումը: Ոսկու պաշարի կորուստը: Հումքի և պարենի պրոբլեմի սրությունը աշխարհի վերաբաժանման համար մղվելիք պատերազմի տեսանկյունով: Գերմանական ֆաշիստների փորձը լայնացնելու հումքային և պարենային բազան Ավստրիան և Չեխո-սլովակիան և այլ երկրներին գրավելու միջոցով: Գերմանական արդյունաբերության միլիտարիզացիան: Ռազմական շինարարությունը և նրա ազդեցությունը տնտեսական դրության վրա: Ֆինանսական օլիգարխիայի սաստկացող գերիշխանությունը երկրի էկոնոմիկայում: Մոնոպոլիստական գերշահույթների աճը: Ֆաշիստական Գերմանիայի տնտեսական էքսպանսիան Հարավ-Արևելյան Եվրոպայի, Մերձբալթյան երկրների, Լատինական Ամերիկայի ուղղությամբ:

## 5. ԻՏԱԼԻԱ

Նոր արդյունաբերության աճումը համաշխարհային պատերազմի ժամանակ:

Հետպատերազմյան տնտեսական և քաղաքական



ճգնաժամը: 1922թ. ֆաշիստական հեղաշրջումը: Լիրայի արժեզրկումը և [illegible] արտահանման աճը: Ցիկլային տնտեսական աշխուժացման կարճատևությունը: 1927թ. կատարված շրջադարձը՝ դեպի ճգնաժամը և նրա հետագա խորացումը համաշխարհային տնտեսական ճգնաժամի զարգացման կապակցությամբ:

Լիրայի նոր արժեզրկումը: Ագրարային ճգնաժամի սրվելը: Ժողովրդական մասսաների աղքատացումը: Հատուկ տեսակի դեֆլյացիան Իտալիայում: Կապիտալի արագացած համակենտրոնացումը, կենտրոնացումը մոնոպոլիաների ձեռքում: Պատերազմի նախապատրաստումը և տնտեսության միլիտարիզացիան: Իտալա-հաբեշական պատերազմը. ինտերվենցիան Իսպանիայում և Իտալիայի տնտեսական ուժասպառումը: «Հռոմ-Բեռլին-Տոկիո առանցքը»: Ֆաշիստական ռեժիմի տնտեսական դժվարությունները և ելքի որոնումը նոր պատերազմի ուղիներում:

## 6. ՃԱՊՈՆԻԱ

Համաշխարհային պատերազմի ժամանակվա բարենպաստ իրադրության օգտագործումը Ճապոնիայի կողմից՝ գերմանական գաղութներ հափշտակելու, Չինաստանում իր հեգեմոնիան հաստատելու և ասիական շուկաները գրավելու համար: 21 պայմանները. Չինաստանին այդ պայմանները ներկայացնելու պատմական նշանակությունը: Ճապոնիայի արդյունաբերության և արտաքին առևտրի բուռն աճը: Նոր ինդուստրիայի

Մանավանդ մետալուրգիայի և նավաշինության վթաքի վարգացումը, քիմիական արդյունաբերության վորոշ ճյուղերի ուժեղ վարգացումը: Գյուղատնտեսության խիստ հետ մնալը, տարահարաբերության խորացումը ժողովրդական տնտեսության մեջ: «Բրնձի խռովությունները»:

1920-1921 թ.թ. ճգնաժամի առանձնապես խոր և սուր բնույթը: Ինտերվենցիան խորհրդային Հեռավոր Արևելքում և նրա կասեցումը:

Համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած ընդհարումը ԱՄՆ-ի հետ: Վաշինգտոնի կոնֆերանսը: Ճապոնիայի հարկադրված նահանջը: Վաշինգտոնի կոնֆերանսի վորոշումների կոմպրոմիսային բնույթի նշանակությունը: Ճապոնիան ձեռնարկում է «մեծ» պատերազմի սիստեմատիկ նախապատրաստման: Ճապոնիայի արդյունաբերական վերելքը 1920-1921թ.թ. ճգնաժամից հետո: 1923թ. յերկրաշարժը: 1927թ. բանկային կրախը: Վոսկե ստանդարտի վերականգնումը 1930թ.: Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի հարաբերականությունը նախապատերազմյան մակարդակի հանդեպ: 1929-31թթ. ճգնաժամը Ճապոնիայում: Ագրարային ճգնաժամի սրվելը: Մասսաների հեղափոխականացման պրոցեսը:

Մանջուրիայի գրավումը Ճապոնիայի կողմից 1931թ.: Տնտեսական և քաղաքական սուր ճգնաժամից յելք փնտրելը պատերազմի հանձնարարների ուղիները: ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի մղելու համար ամրացված պլա-դաշտ ստեղծելու ձգտումը: ԱՄՆ-ում ճգնաժամից



առաջացած ներքին դժվարությունների և պատերազմի համար նրանց անպատրաստ լինելու հանգամանքի ոգտագործումը՝ Մանջուրիայի և Հյուսիսային Չինաստանի հափշտակման փաստի առաջ նրանց կանգնեցնելու նպատակով: Չինաստանը ԽՍՀՄ-ից մեկուսացնելու ձգտումը՝ դրանով իսկ Չինաստանի հետագա հպատակեցումը դյուրացնելու նպատակով: Մանջուրիայի հափշտակման տնտեսական և քաղաքական արդյունքները: Յենի արժեզրկումը: Ճապոնական դեմպինգը, նրա էությունը և նշանակությունը: Ճապոնիայի տնտեսական էքսպանսիան այնորեն կիրառվող դեմպինգի միջոցով: Անգլո-ճապոնական առևտրական մրցակցությունը, առևտրական բանակցությունները և համաձայնագիրը:

Ռազմա-ինֆլյացիոն կոնյունկտուրան Ճապոնիայում:

Վաշինգտոնի համաձայնագրի խախտումն և Ազգերի Լիգայից հեռանալը: Հակակոմինտերնյան պակտը: Ճապոնիայի պատերազմը չինական ժողովրդի դեմ: Իմպերիալիստական Ճապոնիայի տնտեսական նեղ բազան և տևական պատերազմի վտանգավորությունը նրա համար:

Ճապոնիայի տնտեսական դժվարությունները պատերազմի անցած շրջանի վերջում: Ճապոնական կառավարությունը ձգտում է պրովոկացիա սարքելով համաշխարհային պատերազմ առաջացնելու հույս ունենալով, վոր այդ միջոցով յելք կգտնի տնտեսական և քաղաքական փակուղիներից դուրս գալու համար:

## 7. ՉԻՆԱՍՏԱՆ

Չինական արդյունաբերության զարգացումը համաշխարհային պատերազմի ժամանակ; ազգային բուրժուազիայի և պրոլետարիատի աճը: Ճապոնիայի 21 պայմանը և նրանց ազդեցությունը Չինաստանի վրա: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության ազդեցությունը Չինաստանի վրա: Գոմինդանի կառավարության ստեղծումը 1919թ. և հյուսիսի ու հարավի պայքարի սրումը: Սուն-Յաթ-Սենի քաղաքականությունը: Բանվորական շարժման վերելքը: 1925-1927 թ.թ. հեղափոխությունը: Հյուսիսային արշավը, նրա նպատակները և բնույթը: Իմպերիալիստական պետությունների դիրքը Չինաստանում; նրանց վարքագիծը: Չան-կայ-Շիի հեղաշրջումը: Հեղափոխության Ուխանյան շրջանը: Հեղափոխության ազդեցությունը բանվորական և գյուղացիական մասսաների դրության վրա:

Նանկինի կառավարության տնտեսական քաղաքականությունը 1928-33 թ.թ. ժամանակաշրջանում և նրա ազդեցությունը երկրի էկոնոմիկայի վրա. 1929-33թ. ճգնաժամը: 1931թ. հեղեղը, նրա միլիարդի չափերի պատճառները: Չինաստանի խորհրդային շրջանները, նրանց էկոնոմիկան: Մանջուրիայի հափշտակումը Ճապոնիայի կողմից և ազգային վերելքի սկիզբը երկրում: Հակաճապոնական շարժման ազդեցությունը Նանկինի կառավարության տնտ. քաղաքակ. վրա: Երկաթուղիների, խճուղիների և վինապահեստների կառուցումը: 1935թ. դրամական ռեֆորմը, նրա տնտ. և քաղ. նշանակությունը: Անգլիայի դերը: Ազգ. միասնական հակաճապոնական ֆրոնտի ստեղծումը շարժումը: Ճապոնիայի պատերազմը Չին. ժողովրդի դեմ: Չինաստանի տնտ. ռեսուրսները – նրանց մոբիլիզացիան տևական պատերազմ վարելու համար: Պատերազմի ազդեցությունը խաղաղ [illegible] հա-ությունների վրա:

Թարգմանիչ՝ Ա. Զաքարյան

Խմբագրիչ՝ Ս. Ներսեսյան

30
ՀՀ Ազգային գրադարան
NL1015300

28 ... 1959
111
111
2505